Ը· ՏԱՐԻ 2361 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 28 ՏՐԷ 4384 — 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1891 — 16 ՃԷՄԱԶԻԻԼ ԷՎՎԷԼ 1309 — ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ· Պոլիս

درعلیه ده غلطه ده آره‌وه‌لکیان خانده
فرنقی ادارهسنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԴՈՒԹԻՒՆ
Կ· Պոլսոյ համար Տարեկան 150
» » Վեցամսեայ 75
» » Եռամսեայ 40
Օտար երկիրներու Տարեկան 56
» » Վեցամսեայ 28
Փոխ թուղթի վրայ մասնաւոր գրագր. Տարեկան Օսմ· Ոսկի 2
Գաւառաց Թղթատարի Տարեկան միօրինակ Ղրշ· 50

Ի խմբագրութիւնս ուղղուած Դասակ կամ Լայլ գրութիւն... հետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ· ՊՈԼԻՍ, 6|18 ԴԵԿՏ· 1891

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՅՈՑ

ՊԱՏԱՃԷՆ ՀՐԱՒԻՐԱԳՐՈՑ

Մեր Ո·Ա·Ս· Թղթակիցն Երեւանէն մեզ կը հաղորդէ պատճէնն տպեալ հրաւիրագրոյն զոր Էջմիածնի Սինոդը ղրկած է առաջնորդական Թեմերուն, խնդրելով որ ըստ օրինի իրենց պատգամաւորներն ընտրեն և ղրկեն Յէջմիածին, յընտրութիւն Հայրապետին Ամենայն Հայոց։

Իրրեւ շահեկան պաշտօնագիր մը, աւելորդ չենք համարիր այս գրուածը ներկայացնել մեր ընթերցողաց, մանաւանդ զի անոր օրինակն երբեք չէ հրատարակուած լրագրաց մէջ։

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ
ՀԱՅՈՑ
ՍԻՆՕԴՈՍ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՍՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
Թ· · ·
ի 5 Մայիսի Ռ·Ճ·Խ·-1891 ամի
Ս· ԷՋՄԻԱԾԻՆ

Գերապատիւ Առաջնորդին Հայոց · · · · ·
ԽՆԴԱԼ ի Տէր,

Սրբազնագոյն Հայրապետն մեր եւ Կաթողիկոսն ամենայն Հայոց Տ· Տ· Մակար Ա· յետ վեցամեայ Հայրապետութեան անքնելի կամօքն Աստուծոյ փոխեցաւ յաստեացս ի 16-ն ապրիլ ամսոյ այսր 1891 ամի՝ թողլով թափուր զԱթոռ Կաթողիկոսութեան Ազգիս և զՄիաբանական Ուխտ Սրբոյ Աթոռոյս ի վիշտս տրտմութեան։

Ծանուցեալ զայս գոյժ սգաւորիթ Ձերումդ Գերապատուութեան և Ձեօք համօրէն հոգեւորական դասու և բարեպաշտոն Հայազգեաց տիրախնամ քաղաքաց և գիւղօրէից վիճակիդ՝ Սինոդս Սրբոյ Էջմիածնի հրաւիրէ զՁերդ Գերապատուութիւն և զմիաբան ուխտ Սրբոյ Եկեղեցւոյ Ձերոյ՝ ուղղել զՍերմագին մաղթանս առ Քահանայապետն յաւիտենից Քրիստոս Հանգուցանել ի լոյս երեսաց իւրոց զհոգի բարեյիշատակ Հայրապետին մերոյ և զմեզ — զորբացեալ զաւակունս Մօրն Լուսոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի՝ մխիթարեալ պահպանել օժանդակութեամբ և շնորհօք Ամենազօր Սուրբ Հոգւոյն։

Հնազանդեալ կամաց Ամենախնամ Արարչին՝ յետ ամփոփելոյ Միաբանութեան աթոռոյսի հոգ տապանի զնչխարս հոգելոյս Հայրապետին՝ և զկնի հոգւոյ զարժանն զեղանակէ անայթաք առաջնութեացութեան ներքին և արտաքին մասանց կառավարութեան Սրբոյ Վանիցս՝ և առաջի ունելով ապ, զի ընտրութիւն նորոյ Պատրիարք Կաթողիկոսի ըստ զօրութեան ԲԱՐԶԱԳՈՒՆ հաստատեալ կանոնադրութեան պարտի լինել ի լրանալ միոյ ամի յօրէ մահուան Հայրապետին, Սինոդս Սրբոյ Էջմիածնի անօրինեաց հասուցանել ի գիտութիւն Ձերդ Գերապատուութեան և Քրիստոսասէր ժողովրդոց յանձն եղելոց ձերումդ հովուական խնամատարութեան՝ և յանձն առնել ձեզ ի ձեռն քաղաքական իշխանութեան տեղւոյդ հրաւիրել զհայազգի ժողովրդականս ըստ սահմանեալ կանոնաց առանձին իմն ազգասիրական եռանդեամբ, հոգւով մխիթարութեան, բարեպաշտութեան եւ սիրոյ՝ ընտրել ի միոյ իւրեանց զպատգամաւոր մի իբրև ներկայացուցիչ իւրեանց, եւ զկնի ընտրութեան հրաւիրել զնա՝ զընտրեալ պատգամաւորն, գալ այսր ի Սուրբ Էջմիածին ընդ ձերումդ Գերապատուութեան որ էք ներկայացուցիչ համայն հոգեւորական դասու վիճակիդ, և ներկայ դառնել աստ ի Մայր Աթոռս յ3-րդ օր մայիս ամսոյ առաջիկայ 1892 ամի՝ առ ի ընտրել ի համայն հոգեւորականաց ազգիս ճիշդ պահպանութեամբ ծիսից եւ սովորութեանց սահմանելոց առ այս ըստ օրինի՝ զարժանաւոր յաջորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ի կառավարել զեկեղեցին Քրիստոսի և զհայրապետական թափուր մնացեալ Աթոռ Կաթողիկոսութեանն Ամենայն Հայոց, որպէս զի լընտրեալ գլխոյն Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ վարեսցէ զՀայրապետական իշխանութիւնն յամենայնի ըստ անստերիբ Աւետարանական վարդապետութեան և կանոնաց Սրբոց Հայրց ի պարծանս լրութեան ազգիս և ի պայծառութիւն Եկեղեցւոյ մերոյ Սրբոյ։ Եւ եթէ հանդիպեցիք արդելանաց անձամբ ներկայ գտանել ի Սուրբ Էջմիածին ի ժամադրեալն աւուր, յայնժամ բարեհաճեսջիք առաքել ի ժամանակին զներկայացուցիչ ձեր զընտրեալն ի ձէնջ։ Իսկ եթէ ըստ անակնուելի իմիք հանդամանաց և դիպուածոց ո՛չ յաջողեսցի ո՛չ հոգեւոր ներկայացուցչի Գերապատուութեան Ձերոյ և ոչ աշխարհական պատգամաւորին ընտրելոյ ի բարեպաշտ հայազգեաց վիճակիդ անձամբ գտանել աստ ի Սուրբ Էջմիածին ի ժամ ընտրութեան ի նշանակեալն աւուր, յայնժամ ունիք Դուք և աշխարհական պատգամաւորն իրաւունս յայտնելոյ զկարծիս Ձեր և զորոշումն առ այն՝ թէ զո՞ որ յեկեղեցականաց գտանէք արժանաւոր այնմիկ վեհաստիճան հայրապետական իշխանութեան, առաջարկել կանխաւ Սինոդիս գրաւոր, զի մի՝ արգելցի ընտրութիւնն ի նշանակեալն աւուր։

Ի վերջ բանիցս Սինոդս Սրբոյ Էջմիածնի հանդերձ ուխտիւ միաբանութեան Սրբոյ Աթոռոյս՝ միջնորդութեամբ ամենայն Սրբութեանց հանգուցելոց ի Տաճարիս, ամենայնիւրեանդն աղօթիւք առ Աստուած հայցէ վասն համայն սգազգեաց հոգեւորականաց և բարեպաշտոն ժողովրդականաց հայացնելոյ մեծաց և փոքրունց բնակելոց ի վիճակիդ զերկար կեանս, զյաջողութիւն ամենայն բարենպատակ գործոց և զբարգաւաճութիւն ամենայն առաքինական ձեռնարկութեանց, պահպանելով զամենեսեան զնոսա ընդհովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ անվնաս յամենայն երեւելի և աներեւոյթ թշնամեաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Ամէն։

ՏԵՂԱԿԱԼ ԱՏԵՆԱՊԵՏԻ ՍԻՆՈԴԻ
Եւդոկիա Եպիսկոպոս
ԱՆԴԱՄԲ ՍԻՆՈԴԻ
Սամոսատայ Եպիսկոպոս
Ներսէս Եպիսկոպոս
Սարգիս Եպիսկոպոս
Աբրահամ Եպիսկոպոս (Դամբեան)
ԱՏԵՆԱԳՐԻՐ Ս· Փրկչապատեան

ԷՋՄԻԱԾՆԱՑ ԳՈՐԾԵՐ

Նոյն թղթաբերով Տփղիսէն ստացած ենք նամակ մը յորմէ հետեւեալ հատուածները շահեկան կը համարինք ներկայացնել մեր ընթերցողաց։

«Այս տեղ կ'ըսուի որ Ներսէս Եպիսկոպոսը գանձարանը կնքեր է և բանալին տարեր, ըսելով որ Կաթողիկոսին հաշիւ կուտայ։ Բայց աւելի հաւանական է ուրիշ զրոյց մը որուն համեմատ գանձարանին երեք բանալիներն ալ գրաւուած են, և իբր թէ 60 հազար ռուպլի աւելորդ դուժար գտեր են մէջը, որ կարող է լինիլ, քանի որ Էջմիածնայ մէջ սովորութիւն է ապահովութեան համար մասնաւոր անձինք Գանձարանը գնեն իրենց ստակը՝ գանձապետէն ստացագիր առնելով։

* *

Սուքիաս եպիսկոպոսը կառավարութեան հաճելի կը թուէր առաջինները, բայց անոր դէմ պաշտօնական գժգոհութիւնը շատացեր է այդ պատճառով որ նա օրբազան Երեմիա եպիսկոպոսի առաջարկն՝ որով սինոդականք պիտի խնդրեն հղեր կառավարութենէ որ նոցա ռուսահպատակ կաթողիկոս միայն տրուի, չէ յարգեր Սինոդի մէջ և նեռեր։ Մինչեւ իսկ կը պատմուի թէ ո՛ր եպիսկոպոս գրած է եղել դա, և ո՛ւր և ի՞նչպէս պարարտուեր է, բայց այս կէտն տուդելէ ետքը կը գրեմ։ Բնաւ տարակոյս չկայ թէ Պոկուրորին կարծիքն էր այս առաջարկ, որ ապա օրէնք պիտի դառնար նոր Պոլոժենեայով։

* *

Տաճկաստանի Հայոց ուշադրութիւն անհրաժեշտ է, քանի որ թէ՛ հայրապետական դահն եւ թէ՛ Մայր Աթոռոյ ստացուածքը շատ փափուկ դիրքի մէջ են։ Սրբազան Երեմիա եպիսկոպոսը խոստացած էր Կ· Պոլսոյ Սրբազան Պատրիարքին Մայր Աթոռոյ եւ Հայրապետութեան բոլոր շահերն անփոփոխ եւ անձեռնմխելի պահպանելով յանձնել ապագայ Դահակալին։ Ասի արդեւք չէ եղել իրեն այնպիսի առաջարկ մը չատագովելու, որ կաթողիկոսանալու անձնաւորութեանց թիւը ռուսահայ հոգեւորականներով սահմանափակի։ Մինչդեռ նա ամեն տեղ կ'ըսէր որ «Ռուսահայոց հոգեւորականաց մէջ արժանաւորներ չկան այլ եւս, եւ Տաճկաստանի հոգեւորականներն անհամեմատ բարձր են մեզմէ»։ Եւ ինքն քանիցս լսած եմ այս խօսքերը նորա բերանէն։ 1889 թուին ձեմարանի բացման տարեդարձի հանդէսին ձեմարանի դահլիճում բազմաթիւ հանդիսականների ներկայութեան խօսելու միջոցին, «Դէորգ կաթողիկոսը մեծ մարդ էր» ըսելէն ետքը, նոյն խօսքերը նոյնպէս կրկնեց, և դուցէ այդ տարուան հոկտեմբեր ամսուան Աւարտ հանդէսի մէջ ալ լինի յիշուած։

* *

Ոչ օրի գաղտնիք է թէ Սրբազան Երեմիա եպիսկոպոսը սաստիկ հակառակորդ էր երկու տարագիր եպիսկոպոսներուն՝ ի միջի այլոց նաեւ սա պատճառով որ իր տեղակալական իրաւունքները Մայր Աթոռոյ գանձարանի և կայից վերայ կը ջլատէին։ Նոր Սինոդ շինելու և Էջմիածնայ վանքի մէջ նորոգութիւններ ընելու ծրագիրները նպատակ ունին այս կամ այն անձնաւորութեանց դիւրահասկնալի շահերը և Էջմիածնայ հետ գործերին կապուած լինելով Էջմիածնայ մէջ բնակիլը։ Ամենուն բերանն է թէ Նոր Նախիջեւանցի բարեպաշտ մի տիկնոջ 3,000 ռուպլի արժողութեամբ Էջմիածնին նուիրած ոսկի կամարը Էջմիածնի տաճարէն վերցած է և մի այլ տիկնոջ մօտ տեսնուած։ Ներսէս եպիսկոպոսի աքսորմամբ թանգարանը այժմ բոլորովին տեղապահական տրամադրութեան ներքեւ կը գտնուի։ Թանգարանը երեք բանալի ունէր, մէկը կաթողիկոսի, միւսը լուսարարապետի, որ նոյն ինքն Սրբազան Երեմիա եպիսկոպոսն էր, և միւսն ալ գանձապետի քովը կը լիներ։ այժմ, Կաթողիկոսի և գանձապահի բանալիներն ալ Նորին Գերապատուութեան ձեռքը կը լինին։»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴԻՊՊԵՐՆ Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ֆերտինանտ իշխան մտադրութիւն յայտնեց պուլկար բանակը վերակազմելու գերմանական ձեւով։ Այս նպատակաւ պուլկար սպաներ պիտի երթան քանի մը տարի իրենց արուեստը կատարելագործելու գերմանական զինուորական ակադեմիոյ մը մէջ։ Հեծելազօրաց թիւը պիտի պակսի, ընդհակառակն հետեւակազօրաց և թնդանօթաձիգ զօրաց թիւն վրայ յաւելում մը պիտի լինի։

Հավասի թղթակցին արտաքսման դէպքն, որոյ պարագաները պատմեցինք, կը շարունակէ միտքերն զբաղեցնել ի Պուլկարիա, և չէ դադրած օրուան խնդիր լինելէ։

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍԵՐ

Շաբաթ չանցնիր որ եւրոպեան սուլթանազուկները Վիլհելմ Կայսեր մէկ նոր բանախօսութիւնը չբերեն մեզ։ Եւ ամենուն մէջ շահագրգիռ նորութիւն մը կայ որ կանգ առնուլ կուտայ ընթերցողին։ Գերման լրագրեր դեռ չեն մոռցած երիտասարդ Կայսեր այն յատիներէն արձանագրութիւնն յորում կ'ըսէր բացարձակ։ «Վեհապետին կամքն է դերագոյն օրէնքը»։ Դեռ չէ մոռցուած նոր զինուորներուն ուղղեալ այն բանախօսութիւն որով կը յիշեցնէր անոնց թէ իրենց ուխտած հաւատարմութիւնն իրենց վրայ պարտ կը դնէ ի հարկին մինչեւ անգամ իրենց հարց, մարց, եղբարց և քերց վրայ կրակ ընելու՝ ի պաշտպանութիւն վեհապետական իրաւանց Կայսեր։

Ամսոյս 2|14-ին, Կայսրն ի Շդէթին կը գտնուէր՝ նոր զրահաւորի մը ի ծով իջուցման նախագահելու։ Իւր արտասանած ճառով յուզմամբ յիշեցուց թէ 1874-ին տարւոյն նոյն օրն էր յորում գերման նաւատորմին առաջին զրահաւորն ի ծով իջաւ իւր հօր աչաց առջեւ ու մկրտեցաւ իւր մօր՝ Ֆրետերիկ Կայսրուհւոյն կողմէ։ Յետոյ շարունակեց այսպէս։

«Նոր զրահաւորը պէտք է կրէ այնպիսի անուն մը որ պիտի յիշեցնէ այն մարդն որ մեր առաջին զրահաւորին մկրտութեան նախագահեց։ Այս նոր զրահաւորին անունը պիտի յիշեցնէ նաեւ այն փառաւոր ժամանակն յորում իմ հայրս՝ այն գիւցազն ռազմավարն՝ պատերազմեցաւ Գերմանիոյ միութեան համար, այն ժամանակը կ'ըսեմ յորում դրուեցաւ հիմն այն շէնքին որ պսակեցաւ կայսերական թագով։ Նոր զրահաւորը պիտի կրէ անուն մը որ պիտի յիշեցնէ այն ճակատավարն ուր գահաժառանգ Ֆրետերիկ իշխան գերմանական զինուց առաջին յաղթութիւնը տարաւ Թըշնամւոյ մը դէմ որ քաջապէս կը պաշտպանէր ինքզինք։ Այս նոր զրահաւորին անուն կը դնեմ ՎԱՅՍԷՄՊՈՒՐԿ։»

Վայսէմպուրկ, կամ ըստ Ֆրանսական հնչման Վիսէմպուրկ, այն տեղւոյն անունն է ուր 1870 օգոստոս ամսուն Ֆրանսացի Ապէլ Տուէ զօրապետ պատերազմ մղեց գերման զօրաց դէմ որոց կը հրամայէր Ֆրետերիկ գահաժառանգ իշխանն։ Յայտնի է թէ այս ճակատամարտին մէջ Տուէ զօրավարն սպանեցաւ, և Ֆրանսական բանակն իւր առաջին պարտութիւնը կրեց։

ՍԵՐՊԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ

Փէշթէ Լլոյտ իրազեկ թերթը կը ծանուցանէ թէ Սերպիոյ պատանի թագաւորն առաջիկայ գարնան Կ· Պոլիս պիտի գայ իւր յարգանքը մատուցանելու Վեհ· Սուլթանին։ Զօր· Կրուիչ այս մասին զեկուցեր է ուր որ անկէ։ Կը լիշուի թէ անցեալ ամառ Սերպիոյ թագաւորն այցելեց Ռուսիոյ և Աւստրիոյ Արքունեաց։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Թան, Տեպ, Ֆէյլ, և ուրիշ սակաւաթիւ ֆրանսական թերթեր որք աւելի կամ նուազ հակառակ են մաքսապաշտ ուղղութեան, իրենց մաքսապաշտ ազդակիցներուն աչքը կը խօսին Գերմանիոյ, Աւստրիոյ-Հունգարիոյ, Իտալիոյ, Պելճիոյ և Զուիցերիոյ միջեւ նկնքեալ մաքսային միութիւնն, որ ուղղեալ է Ֆրանսայի դէմ, իբրեւ փոխադարձութիւն ֆրանսական մաքսերուն տարապայման բարձրացման, որոյ այն վեց երկիրք հաղորդած են իրենց գլխուն ճարը նայիլ, և այնպիսի համաձայնութիւն մը գոյացնել իրենց մէջ որ կարօտ չլինին Ֆրանսայի ներածման և արտածման վաճառականութեան։ Այս բանս որ եղաւ, ա՛լ Ֆրանսայի մաքսապաշտք ուղածնուն չափ յիմարութիւններ կրնան գործել, կ'ըսեն յիշեալ երեք թերթք։ Ֆրանսայի դէմ մաքսային նիզակակցութիւնն օր մը կրնայ մինչեւ իսկ քաղաքական նիզակակցութեան մը փոխուիլ, որով եւրոպեան ամէն Տէրութիւնք, բաց ի Ռուսիայէ, դառնան Ֆրանսայի դէմ։

Պերլինէ հետեւեալը կը հեռագրուի առ Ֆիգարօ։

«1891 տարին դարուս ամենէն կարեւոր տնտեսական դէպքին կատարումը կը տեսնէ։—Վեց Տէրութիւններու մէջ տնտեսական նիզակակցութիւն մը, որք 130 միլիոն բնակիչ ունին, և որոց վրայ հաւանօրէն պիտի աւելնան ի մօտոյ Սպանիա և Ռումանիա։»

ԻՏԱԼԱԿԱՆ ԵԼԵՒՄՈՒՏՔ

Ֆրանսական լրագրեր հետեւեալ հեռագիրը կը հրատարակեն։

Հռոմայ կաթոլիկ կուսակցութեան երեւելի անդամներէն մին՝ Ռոսբիլիոնի իշխան՝ Պետութեան փոխ տուած էր պէտք եղած դումարները՝ քանի մը կաժուրջներու չինութեան համար Հռոմայ դաշտին մէջ, ուր կառավարութիւնը գետինը մշակութեան յարմար գործելու համար կարդ մը աշխատութեանց ձեռնարկած է։ Իշխանը մինչեւ ցարդ իւր առնելիքը չէր կրցած ստանալ, թէեւ քանիցս պա-

---

—)(114)(—

ԹԵՐԹՕՆ Ա·ՐԵՒԵԼԻՔԻ

ԵՐԿՈՒ ԱՆՄԵՂՆԵՐ

ԺԻԼ ՄԱՌԻ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՈՍՐԻՆ ՄՕՏ

Բայց վերջապէս Հէնրի ճակատը վեր առաւ։

—Ոճիր մը գործուած է հոս։ Ես դատաւոր եմ։ Պարտքս կը կատարեմ։

—Դատաւո՞ր։ Եւ զո՞ւն պիտի հարցաքննես · · ·

—Ես, այո։

—Մե՛ծդ Աստուած, ըսաւ Թերէզ, աչուընները խոշորցած խօլական սարսափով մը։

Պարուլլը միտքը կը բերէ, մարդասպանը, Պարուլլն, սոսկալի աւազակն, իր որդին և այս մարդուն ալ որդին։

Եւ այս բանս այնքան սոսկալի կերեւայ իրեն որ պահ մը իր ողորմելի գլուխը կը ցնորի և կ'արձակէ սուր ծիծաղ մը որ կը վերջանայ հեծկլտուքներով։

Հէնրի չի հասկնար ինչ որ տեղի կունենայ անոր վրայ։ Որդւոյ մը գոյութեան ահարկու յայտնութիւնը չէր եղած իրեն։ Միտքէն անգամ չի կրնար անցունել որ իրմէ ծնած զաւակը, ժամանակաւ այնքան անզգոյշ անտարբերութեամբ լքուած, յանկարծ իր կեանքին մէջ երեւան պիտի գայ, սպառնալիքի մը պէս, խղճի խայթի մը պէս։ Դիպուածն, իր անգութ արդարութեան մէջ, իր ճամբուն վրայ կը նետէ զնա, և հայրը որդւոյն դատաւորը պիտի ընէ։

Այս է որ կը խենդեցնէ խե՛ղճ կինը։ Պահ մը կը կարծէ թէ չպիտի տոկայ այսպիսի հարուածի մը, եւ սակայն քիչ մը կը հանդարտի։

Պէտք է որ պատասխանէ, վասնզի պիտի հարցաքննուի։

Ոչ, տակաւին խենդեցած չէ։ Բայց իր գլխուն մէջ տարօրինակ գերագրգռում մը, սաստիկ տենդ մը, ցնորակոծութիւն մը կը զգայ որ կը խոշորցունէ իր կեանքի հին դէպքերն այն չափով որով Միլպէրկի յանկարծական վերադարձն իր աչաց առջեւ կը բերէ զայնս։

Ցաճախ ինքզինքն յանդիմանած էր Պարուլլը լքելուն։

Ո՛չ, երբ զայն իրմէ առնել եկած էին, յանցաւորն ինք չէր եղած։ մայրն ալ, տղուն պէս, զոհուած էր։

Բայց յետոյ, յանցանքն սկսած էր։ տեղի տալու չէր ժան Վիլէնի թախանձանաց, երբ սա կ'աղաչէր նմա որ երբէք ետ չառնէ զաւակն, այս պայմանը դնելով իր ամուսնութեան համար։

Այն ատեն պէտք չէր որ ամուսնանար, և չափահաս ու ազատ ըլլալէն ետքը, տղան իր քովն առնելու էր։

Եւ յետ ամուսնութեան, բաւական չէր աղաչած Վիլէնին որ ամէն բան մոռնայ և լքեալն ընդունի։

Սուտգիւ, ինք ընդունած էր այս լքումն իր սրտին բովանդակ զուարթութեամբն և այս սիրտը կ'արիւնէր այսօր։

Այո, այո, ի սկզբան զոհ, յետոյ յանցաւոր։

Ասիկա իր յանցանքն էր։—Իր ոճիրն, Միլպէրկի ալ ոճիրը, եթէ տղան յանձնուած էր վարձկան ձեռքերու։

Իրն էր յանցանքը եթէ տղուն վրայ չէր հսկուած, խորհուրդ չէր տրուած անոր, չէր ուղղուած նա։

Իրն էր յանցանքը եթէ դատարկաբերելիկ էր եղած, փախչելով իր սնուցիչներու քովէն, որոց մօտ անշուշտ չէր գտած այն սէրն որ կարեւոր վար դնել զայն։

Իրն էր յանցանքը եթէ թափառիկութենէն անցած էր նա գողութեան։

Իրն էր յանցանքը եթէ գողութենէ մարդասպանութեան մէջ նետուած էր։

Այս տենդին ճնշման տակ, զինք չարչրկող մտանորութեան մէջ, պատասխանատուութիւնք կը փոխուին։ Մառի նոյն իսկ ինքզինքը Միլպէրկի չափ յանցաւոր կը կարծէ և ինքներեն չի հարցուներ իսկ թէ՝ ընկերութիւնն որ բռնի իր տեղն անցած էր, Պարուլլի ծննդեան միջոցին, կատարած էր ինչ որ պէտք էր ընել զայն կրթելու, պահպանելու պարկեշտութեան ուղիղ ճամբուն մէջ, մանաւանդ զգուշացընելու համար զայն։

Այն ատեն կը ծռէ գլուխը այն ամբաստանութեան տակ որ ինքն իրեն դէմ կելնէ իր սրտին խորէն։

Մառի պիտի փորձէ ազատել իր զաւակը։ Ինքնին կ'ըսէ թէ այս է իր պարտականութիւնը։

Եւ այս բանս յանկարծ զայն աւելի կը զօրացնէ ու միտքը կը լուսաւորէ։

Սակայն Հէնրի տը Միլպէրկ հիմակ աւելի տէր է իր անձին։

—Պատրաստ էք ինձ պատասխանելու։

—Այո։

—Ինձմէ վախնալու բան մը չունիք։ հոս կը ներկայացուցեմ սուրբ բան մը, Արդարութիւնն, որ հաւասար է ամենուն համար, որ իրաւ է թէ կը հարուածէ առանց գութի, այլ որ կը պաշտպանէ հաւասարապէս։

—Արդարութի՛ւնը, ըսաւ Թերէզ դառնութեամբ լի հեգնական ձայնով։ Արդարութիւնը՝ դուցէ ձեր շրթանց վրայ է։ Երբէք ձեր սրտին մէջ չէ այն և երբէք ալ չպիտի ըլլայ։

Եւ որովհետեւ Միլպէրկ կը լռէր՝ անշուշտ զգածեալ այս յանդիմանանքէն, Մառի յարեց։

—Խօսեցէ՛ք։ Պատրաստ եմ ձեզ պատասխանելու։

Հէնրի ձեռքը ճակտին տարաւ և ինքզինքն ամփոփեց։

Այն ատեն խիստ ցած, գրեթէ իմանալի ձայնիւ, Թերէզ կը մրմնջէ։

—Ամեն բան պիտի ծախուի։ Հայր Վիլէն ստակ ունէր, շատ ստակ, բայց կը մերժէր մեզի տալու։ Անողոք կը մնար, կ'ատէր զմեզ։ Դացի աղաչել իրեն որպէս զի մեզ պէտք եղածը փոխ տայ · · ·

Մառի կանգ առաւ։ Հառաչեց։ Զայնը գամ քան զգամ կը տկարանար։

—Շարունակեցէ՛ք։

—Իրա մերժեց · · ·

—Ո՞յն ատեն։

—Այն ատեն ստակն ինծի ցուցուց, ըսաւ բառերը փնտռելով, ստելով, ինքզինքը զոհելով՝ զաւակն ազատելու համար։ Զիս աւելի վշտացնելու համար կ'ըսէր թէ այդ դումարը քանի մը միլիոն Ֆրանք կը պարունակէր։ «Եւ դուն սուս մը չպիտի առնես, կ'ըսէր, ոչ իսկ սուս մը։» Զայրացայ · · · ստակին վրայ յարձակեցայ, գէմ անկից յափշտակելու համար խեղճ ագարակիս ազատելու չափ դրամ։

Թերէզ նորէն կանգ առաւ։ Ուժը կը պակսէր իրեն ստայօդ պատմութիւնն աւարտելու համար։

Եւ դատաւորը, զարմանահար, նախատեսելով ինչ որ նա պիտի ըսէր, չը սպասելով այսօրինակ խոստովանութեան մը, անոր երեսը կը նայէր, անհունապէս խռովեալ։

—Ծերունին ուզեց պաշտպանել իր ոսկին եւ դանակ մը առաւ։

—Եւ յե՞տոյ · · ·

—Ցետոյ զարկաւ ինձ · · · հոս, ուսիս մօտ։

—Եւ զայրոյթէ կուրցա՞ծ էիք։

—Զայրոյթէ եւ նաեւ վասնզի կը նախատեսէի՝ վայրենի գազանի աչերուն պէս փայլող իր աչուընէրէն՝ որ եթէ ձգէի պիտի սպանէր զիս · · · ձեռքս վգին չուրջն անցուցի, այո, առանկ, մինչ երկրորդ անգամ դանակը կը վերցուներ զարնելու։

Մառի կանգ առաւ։ Հառաչեց։ Զայրոյթ եւ սաստիկ սեղմեցի, այնքան սաստիկ, որ դանակը գետինն ինկաւ եւ ինք հաւասարակշռութիւնը կորցուց · · · գետին գլորեցաւ և ալ չշարժեցաւ։ Չէի ուզած զայն սպանել, ինքզինքս միայն պաշտպանել ուզած էի և սակայն մեռած էր նա · · · այն ատեն ես այնքան սոսկացի որ նաւազեցայ, և կարծելով որ ես ալ պիտի մեռնիմ, աղաղակեցի, օգնութիւն գոչեցի և ապակի մը կոտրեցի ուշադրութիւն գրաւելու համար։ Ցետոյ, անցած դարձածէն անտեղեակ եմ։ Մարդեր եկեր են։ Ինձ օգներ են։ Մնացեալն ըսած ըլլալու են ձեզ։

Մառի լռեց, արմուկները սեղանին կրթնցուց և այն ձեւն առաւ զոր ունէր քիչ մը առաջ երբ դատաւորը ներս մտած էր, իր արտասուալից երեսը ծածկեց երկու ձեռաց մէջ և մնաց այնպէս։

Հէնրի ոը Մելպէրկ լռութիւն կը պահէր։

Ուրեմն ճշմարի՞տ էր անոր պատմածը։ Ըսածները կը համաձայնէին քիչ մը առաջ Պէզզի գուշակութեանց հետ։ Խեղճ կինը ոճիր մը գործելու կարող չէր։ Բայց յարձակում կրած ըլլալով, ինքզինքը պաշտպանած էր։

Այն ատեն սպանած էր։ Արդարեւ ըրած պատմութիւնը շատ պարզ էր։ Անճշմարտանման բան մը չկար անոր մէջ։ Եւ սակայն դատաւորը կը զգար որ կասկածներ կը պատէին իր միտքը։

(Շարունակէ)

հանչած։ Վերջապէս, անցեալ չաբաթուն անձամբ երթալով գանձապանի պաշտօնատունն, կը տեսակցի Ելեւմտից խորհրդականին հետ, որ կը յայտնէ թէ պատրաստ դրամ առատ չէ, և հինգ-վեց ամիս համբերել կ'առաջարկէ։ Իշխանը չի հաճիր և կ'իմացնէ թէ դատարան պիտի դիմէ։ Կ'երեւի թէ դատաստանի միջոցին կարեւոր յայտնութիւնք պիտի լինին իտալեան գանձուն անձուկ վիճակին վրայ։ Բայց գրողը Ֆրանսացի է։ Եւ Ֆրանսացիք ժամանակէ մ'ի վեր չենն նպաստեր իտալեան վարկին պահպանութեան։ ընդհակառակն։

ՍՈՒԴԱՆԻ ԳՈՐԾԵՐ

Գահիրէէ կը հեռագրուի թէ Խարթումի էմիրին ձեռք Սուտանի պատերազմաց առթիւ գերի ինկած երեք անձինք աղատութիւն գտած լինելով Քորոսքօ ժամանած են քաղաքողջ։ Առանք են մէկ միսիոնար, Հ։ Օրվայտէր և երկու մայրապետք՝ Բաթէրինա Քինվարինի և Էլիզապէթ Վէնթուրինի, որք 1883ին ի Բորտոֆան գերի ինկած էին։ Իրենց գերութեան ժամանակն յՕմտուրման անցուցած են։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾԷՍ Ի ՓԱՐԻԶ

Ֆրանսայի կրօնական նախարարութիւնը լատինական յունածէս Սուրիացիներու հոգեւոր պաշտամանց յատկացուց Սէն-Ժիւլիէն-լը-Ֆովա եկեղեցին, ուր անցեալ չաբաթուն Ս։ պատարագ մատուցուեցաւ, ըստ ծիսից արեւելեան յոյն Եկեղեցւոյ։ Պատարագատոյցն էր Միխայէլ Այուն վարդապետ, անօրէն իւր կրօնակցաց վարժարաններուն Զահլէի և Պէյքայի թեմերուն մէջ ի Սուրիա։ Իբր երկու հարիւր հոգիք ներկայ էին արարողութեան։ Փարիզի մէջ աւելի մարդ չկայ այս սուրբացի հասարակութենէն։ Վարդապետը, գեղեցիկ և խոյոր սեւ մորուքով մարդ մը Թուրքիայի տարազով, Փարիզ եկած էր կրթական նախարարութեան մօտ ձեռնարկ մ'ընելու։ Իրենց Սուրիոյ վարժարանք ֆրանսական լեզուն կ'ուսանդեն, եւ օգտակար ճանչուած են ֆրանսական տեսակետով։ 34 դպրոց ունին, 3000 մանչ աշակերտներով, որոց 200ը ֆրանսերէն կը սովրին, և աղջկանց 9 վարժարաններ, որոց աշակերտուհիներէն 60ը կ'ուսանին նոյն լեզուն։ Արաբերէն միայն խօսող այս հասարակութեան մտքին վրայ ներգործելու համար, վարդապետն արաբերէն լեզուաւ հռահաստոր ֆրանսական պատմութիւն մը յօրիներ է, զոր նախարարական հաւանութեան ենթարկելու եկեր է Փարիզ, կ'ըսէ Ֆիգարօ։

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐ

Անցեալ չաբաթուն խիստ հոկողութեան ներքև Սոֆիա բերուեցան Հունգարիոյ մէջ կոխուած պուլկարական նոր արծաթ դրամները մէկ և երկու ֆրանքնոց, և ի շրջաբերութիւն հանուեցան։

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Գիւղացւոց ժողովներուն խնդրանաց համեմատ ռուս կառավարութիւնը սովահար նահանգաց մէջ հարիւրաւոր գիւղեռուներ փակել տուաւ։

ՊԻԶՄԱՐՔԱԼԱՆՈՒԹԻՒՆ

Պիզմարք իշխան տեսնելով որ իւր գաղափարաց Հռոմ-ուէր ՆէրէյԲէրնի մէջ պաշտպանուին անբաւական կուգայ, բանակցութեան սկսեր է Պերլինի մեծ լրագրաց մին գնելու համար։ Եթէ բանակցութիւնք յաջող ելք չունենան, ինք նոր լրագիր մը պիտի հիմնէ։

Ի ԶՈՒԻՑԵՐԻԱ

Զուիցերիոյ դաշնակցային խորհրդոյ նախագահ մը՝ Պ. Վէյդի որդւոյն ամուսնալուծութեամբ բաժանեալ կինը, տիկին Թէչէր, այս կիւրակի գիշեր ինքնասպան եղաւ իւր տան բաղնիքին մէջ, ի Շանբէլ մերձ ի ծընէվ։ Տիկին Թէչէր Հելուետեան Դաշնակցութեան նուիրած էր իւր բոլոր հարստութիւն, աւելի քան երկու միլիոն ֆրանքի արժէքով, իբրեւ գրամագլուխ ծառայելու համար գեղարուեստից զարգացման։ Դաշնակցային Խորհրդարանի քուէարկած մէկ օրէնքով, ի փոխարէն այս նուիրատուութեան տիկնոջ ապահովուած էր 70 000 ֆրանքի տարեկան ցկեանս եկամուտ մը։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ
INDICATEUR ORIENTALE
ԶԷՐՎԱԹԻ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԸՆԿ.

Աբ-Էլէա Տարէեցոյի վարչութիւնը կը փութայ ծանուցանել հասարակութեան թէ 1892 տարւոյն համար յիշեալ ՏԱՐԵՑՈՅՑին 11Դ. տպագրութիւնը մամլոյ տակ է եւ կը հրատարակուի յառաջիկայ յունուարին։

Կը խնդրուի այն անձերէն որք տակաւին չեն տուած իրենց հասցէն և անունդմէ որք փոփոխութիւններ կուզեն ներմուծել, որ բարեհաճին ըստ կարի շուտ զրկել զայնս յիշեալ վարչութեան գրասենեակն, Կայսթա, Մոմկանէ փողոց, Սելլոզ Խան, թիւ 12-14։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՌՕՐԵԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Բեռդրսպուրկէն կը գրեն մեզ։

Ինչպէս գիտեն Աբ-Էլէի ընթերցողք, շատ անորոշ է աքսորեալ եպիսկոպոսների կենցաղը և չէ կարելի տեղեկութիւններ առնուլ նոցա հոգեկան տրամադրութեանց մասին։

Թէև կ. Պոլսոյ ազգ. լրագրաց հաղորդուած է եղել թէ Ներսէս եպիսկոպոս վախճանուած է ճանապարհին, սակայն Պետերպուրգի մէջ բնաւ այդպիսի լուր չկայ։ Ընդհակառակն պաշտօնական աղբիւրէ առնուած տեղեկութիւններ ցոյց կըտան թէ Ներսէս եպիսկոպոս Պօլտաւայի մէջ հոգեկան սաստիկ տագնապի մէջ է։ իր կեանքը լի է խորին յուզմունքով, կուզէ տեսնուիլ, խօսիլ, և ալն։

Իսկ Սուքիաս եպիսկոպոս չի ուզեր ո՛չ տեսնուիլ, ոչ խօսիլ, ոչ գրել։ ամբողջ ժամանակը բոլորովին միայնակ նստած կը մնայ իր խուցի մէջ։

Տեսակցութիւնք բնականաբար լոկ պետութեան պաշտօնէի հետ ներելի են։ ուրիշներու հետ արդէն արգիլուած է, ինչպէս գիտէր Այդ պաշտօնական տեսակցութենէն է ահա որ կը հրաժարի Սուքիաս եպիսկոպոս, ինչպէս կը պատմուի։ Նահանգապետը քանիցս յայտնած է նմա թէ ինչ որ կը փափագի կարող է ուզել։ այս եւ նմանօրինակ առաջարկներին, Սուքիաս եպիսկոպոս պատասխանել է միշտ բացասական կերպիւ։

Նորընտիր Ուսուցիչական խորհրդոյ անդամներէն Տոքթ. Վահրամ էֆ. Թորգոմեան, Համբարձում էֆ Ալաճաճեան և Միհրան էֆ. Ասքասաղ հրաժարած են նոյն խորհրդոյ անդամակցութենէն։

Այս աւուր Սոֆոն կը ծանուցանէ թէ Պարտիզակի նախագահ քարոզիչ Արժ. Եղիշէ վարդապետ Դուրեան անցեալ կիրակի օր Պարտիզակ երթալով, տեղւոյն եկեղեցւոյն մէջ պատարագելէ յետոյ Ամէն. Ս. Պատարիւքը Հօր վերջին կոնդակը կարդացեր է։ Ն. Արժանապատուութիւն յաւարտ ընթերցման կոնդակին, քարոզ խօսելով, պատմական ճշմարտութեամբ բացատրեր է թէ Հայ ազգն հին ժամանակաց մէջ քրիստոնեայ միւս ազգերէն շատ մը ճնշումներ կրեր և օսմանեան կառավարութեան բարձր հովանւոյն ներքեւ մտած ժամանակէն ի վեր երջանկութեան ու անդորրութեան արժանացած է։ Տ. Եղիշէ վարդապետ թուելով Վեհ. Սուլթանի բարձր ձիրքերն՝ հետեւեալ բարեմաղթութիւններն ըներ է։ «Բարձրեալն ու ամենակարող Աստուած մեր վրայէն անպակաս ընէ օսմ. կայսրութեան փառքն եղող մեր ամենողորմած, ամենագթած և արդարադատ Օգոստափառ Գայսր Իւլ-Համիտ Խանի կայսերական բարձր շնորհներն»։

Եկեղեցին դտնուող ժողովուրդն ինչպէս նաեւ հայու բողոքական վարժարանաց աշակերտք ամենեներով ձայնակցեր են այս բարեմաղթութեանց։

Պիտիգօրսքի հայարնակ քաղաքէն նոյեմբեր 17 թուականաւ կը գրեն Թիֆլիզի լրագրաց։

Այսօր, կիրակի, հայոց եկեղեցում, հանդիսաւոր պատարագից յետոյ, ուրի ժամանակ երգում էր տեղիս երկսեռ դպրոցների երգեցիկ խումբը, հոգեհանգիստ կատարվեց ի յիշատակ հանգուցեալ Խաչատուր Ա.թամանեանցի, որը նուիրել էր երկսեռ դպրոցների շինութիւնը միանուագ 3000 ռուպլի։ Հոգեհանգստից յետոյ բազմութիւնը գնաց դպրոցի նորակառոյց շինութեան օրհնութեան հանդիսին ներկայ դտնվելու համար։ Քահանան հատուցաւ կերպով յիշեց տեղիս հայ հասարակութեան այս երկու, երեք տարվայ միջոցում ցոյց տուած անխոնջ աշխատութիւնը կրթական գործում։ Մեր փոքրիկ հայ գաղթականութիւնը կարողացաւ եկեղեցի և ուսումնարան ունենալ, այնպէս որ հայ մանուկները իրանց մայրենի լեզուով են խօսում այժմ։ Ուսումն այժմ կը շարունակվի դպրոցի յատուկ նոր շինութեան մէջ։

Մեր այս աւուր առաջին երեսին մէջ հրատարակած ենք պատճէնն կաթողիկոսական առաջիկայ ընտրութեան հրաւիրագրոց որոց վրայ վերջին ժամանակներս այնքան խօսուեցաւ և որոց մէկ օրինակը մեզ հաղորդուած է մեր Ո-դէսա թղթակցին կողմէ։

Ստուգած ենք թէ այս պատճէն նոյնն է Թուրքիոյ վիճակաւոր առաջնորդաց ուղղեալ հրաւիրագրոյն հետ։

Հայերէնի, Թուաբանութեան, աշխարհագրութեան, պատմութեան և տօմարագիտութեան դասատուութեան համար պարապասի մէջ կը կայ, թէ այցելութեամբ և թէ մշտապէս, թէ գուառաց և թէ Պոլսոյ դպրոցաց համար։ Փափաքողք կրնան Աբ-Էլէի խմբագրատունը դիմել։

ՇԱԲԱԹՕՐԵԱՑ ԱՐԵՒԵԼՔ

Աբ-Էլէի վաղուան համարը, բաց ի իւր սովորական նիւթերէն, կը պարունակէ նաեւ հետեւեալ յօդուածներ։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՋԱՑՆԵՐ։ Պատուհանին թերթուածը—Վայրագ Հնչեակ—Ա յն շրջ. ջազգեստը (Հատուածք Ա. ՉՕՊԱՆԵԱՆԻ նոր հրատարակութենէն)

ՏԱՐԲԱԼՈՒՈՒԹՄԱՆ ՓԵՐԹՈՒԱԾԸ

ՓՄԱՀԱՑՈՅՑՆԵՐ։ Աշուն—Մաճ։ Մ. Շ.

ԲԱՂԴԱԴ ՈՒ ՍԷՐ (Բանաստեղծութիւն) ԷՄՄԱՆՈՒԷԼ ԷՍԱՅԵԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՁԷԷ՞Ր ԹԷ ԳՐՆՇԲԼԱՐ։ Բ. Ֆ.

ՀԱՅ ԳՐԱՏՈՒՆ ՄԸ ...

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՎԱԵՀԱՆԸ Ա. ՉՕՊԱՆԵԱՆ

ՍՈՒԷԶԻ ՋՐԱՆՑՔ—Ց. ԽՆԴԻՐԵԱՆ

ՑՈՒՇՔ ԵՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԱՖԵՏԱԿԱՆ (Նամակ Մայթայէ) Ն. ՇԱՀԱՄԵԱՆՑ

ԱՍԴՐԱ (Գրական վէպ Քարմէն Սիլվայթ) Թարգմ. Թ. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսն և Ելմտական Նախարար Նազիֆ էֆէնտի երէկ կայս. պալատ գնացին եւ ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Դատական Վսեմ. Նախարարն եւ Քաղաքապետ Վսեմ. Բրտվան փաշա երէկ Բարձր. Մեծ-Եպարքոսին քով գնացին և պահ մը խորհրդակցեցան ինչ ինչ խնդրոց վրայ։

—Ֆրանսական, հելլենական ու պարսկական դեսպանք երէկ Բ. Դուռն երթալով, տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. խորհրդականին հետ։

—Հանրային Պարտուց վարչական ժողովոյ անդամ Պ. Քայլարտ երէկ Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Բարձր. Մեծ- Եպարքոսին հետ։

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Պետական խորհրդոյ ու Նախարարաց խորհրդոյ որոշմամբ, որ վերաբերեալ է կայս. Իրատէով, Երկրագործական Դրամատան կեդրոնական պաշտօնատան համար քարուկիր շէնք մը պիտի կառուցուի 4020 ոսկւոյ ծախքով։ Այդ առթիւ կազմեալ յանձնաժողով մը թեւեւ գործի ձեռնարկած է, սակայն պէտք տեսած է 690 ոսկւոյ նոր ծախք մ'ընել հիմերու շինութեան համար, որովհետեւ հարկ դատուած է հիմերու համար 650 խոշանարդ մեդր պատեր հիւսել։ Արդ, Պետական խորհրդոյ ու Նախարարաց խորհրդոյ որոշմամբ, որ վաւերացած է կայս. Իրատէով, այդ ծախքն եւս պիտի աւելցուի նախապէս որոշեալ 4020 ոսկիին վրայ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պետական խորհրդոյ օրէնագիր ճիւղը նկատելով որ Բաղաքապետութիւնն իբրև Եռաֆի տուրք տարեկան 120 դրչ. ի տուրք մը կառնու բոլիցաճիներէն իբրեւ միջնորդ, վաճառական ու յանձնակատար, մինչդեռ ասոնք Առեւտրական նախարարութենէն տարեկան 300 ղրուշով արտօնագիր կառնուն, և նկատելով որ ասոնք վերջերս հրատարակեալ միջնորդներու յատուկ կանոնագրքին համաձայն, վաճառականաց դասուն կը պատկանին և ըստ այնմ պարտին Առեւտրական Մենեակէն արտօնագիր առնուլ, որոշած է որ Բաղաքապետութիւնն ասոնց առանձինն թեղթերէ չտայ։ Այս որոշում եպարքոսան հրամանաւ հաղորդուած է թէ՛ Առեւտրական նախարարութեան և թէ Բաղաքապետութեան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՆ

Անգլիական դեսպան Սր Ուիլիըմ Հուայդ երէկ արձակուրդով մեկնեցաւ մայրաքաղաքէս ի Պերլին, իր աղջիկը տեսնելու համար։

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Այսօր հելլենական դեսպանին ծընընդեան տարեդարձն է։ Բայց Ալեքսանդրա իշխանուհւոյն մահուան պաշտօնական սուգին պատճառաւ դեսպանը և դեսպանուհին ընդունելութիւն չպիտի կատարեն։

ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Օսմ. Հանրային Պարտուց վարչութեան նոյեմբեր ամսոյ հասոյթք 7000 օսմ. ոսկւոյ յաւելում մը կը ցուցնեն բաղդատմամբ նախորդ տարւոյ նոյն ամսուան հասոյթից։

Ինչպէս յայտնի է, Հանրային Պարտուց վարչական խորհուրդն ընդունած էր Տոքթ. Ֆիերրիէն իւր ներկայացուցիչ գերմանացի բաժնետերաց, առանց ընդդ. ժողովի դումարման հարկ տեսնելու։ Այս որոշման պատճառն այն է որ սոյն վարչութեան պատուիրակներն ի մօտոյ պիտի փոխուին։ Պատուիրակաց պաշտօնը կաւարտի 1892 մարտ 1/13ին։

ՑՈՒՆՑԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Ցունաց Պատրիարք Ամէն. Տ. Նեոֆիտոս Ը. նախընթաց օր այցելութիւններ տուաւ պետական մի քանի պաշտօնատարներու։ Այսօր Ս. Նիկոդէմոսի տօնն ըլլալով, Ն. Ամենապատուութիւն ներկայ կը դտնուի Դալաթիոյ հանսուն եկեղեցւոյն մէջ, ուր կը պատարագէ Էրէյլիի մետրապոլիտ Տ. Կերմանոս։

ՄԷՐՍԻՆ-ԱՏԱՆԱՑԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Մէրսին-Թարսուս-Ատանա երկաթուղւոյն ընկերութեան պարտատերաց և բաժնետերաց ժողովոյն մէջ, որ անցեալ չաբաթու դումարեցաւ, նախագահ Պ. Քոլինսըն ծանոյց թէ այս դումարման նպատակն էր քննել և քուէարկել երեք հարկ ըլլար՝ Սրը Լուկար Վինսընթի և երկաթուղւոյն ընկերութեան միջեւ մտադրեալ կարգադրութիւն մը՝ գծին մինչեւ Եփրատ գետը երկարաձգման համար։ Եթէ Սրը Լուկար Վինսընդ ձեռք բերէ իր արդէն խնդրած կայս. հրամանն, յանձն պիտի առնու երկաթուղին ամբողջացուցեալ մինչեւ Պիրեճիկ, Եփրատի վրայ, գիծ մը երկարելով ի Մարաշ, ընդամենը 225 մղոն, (400 քիլոմէթր) որուն ծախքը պիտի ըլլայ մօտաւորապէս 2,000,000 անգլ. ոսկի, և երբ առաջին 56 մղոնները չինուին մինչեւ Օսմանիյէ, ընկերութիւնը օսմ. կայս. Պանքային ընդհ. տնօրէնին պիտի տայ 40,000 անգլ. ոսկւոյ արժէթուղթ և երբ գիծն աւարտի մինչեւ Մարաշ (75 մղոն աւելի հեռի) ընկերութիւնը 42,500 անգլ. ոսկւոյ արժէթուղթ ալ պիտի տայ նմա։ Առաջադրեալ երկաթգծման գործադրման շնորհիւ Մէրսինի գծին շահագործման հասոյթն ահագին յաւելում պիտի ունենայ, վասն զի ամենէն համեստ դնահատումը կը ցուցնէ թէ Մէրսինի գծին յաւելուածական զուտ հասոյթը պիտի ըլլայ 38,500 անգլ. ոսկի, որ արդի հասոյթին 13,000 ոսկւոյն վրայ աւելցուելով 51,500 ոսկւոյ գումար մը կը դոյանայ, գումար որ, պարտաթղթոց տոկոսին և արժէթղթոց համար հարիւրին 20 ին վճարումէն ետքը, մեծ յաւելուած մը պիտի թողու։ Մասնախումբն առաջարկեց վարչական խորհրդոյն՝ այժմու տարեկան զուտ հասոյթն, որ 13,000 ոսկիէն աւելի է, հինգ առ հարիւր տոկոս տալ պարտաթղթոց, բան մը զոր շատ դիւրին է կատարել։ Յետոյ ժողովը միաձայնութեամբ վաւերացուց հարկ եղած որոշումները՝ առաջարկեալ կարգադրութիւնը գործադրելու համար։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Դամասկոսի առողջապահական բաժիկ Տոքթ. Սէպասթիօի կողմէ դեկտեմբեր 4 թուականաւ եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ վերջին 24 ժամուն Դամասկոսի մէջ հնտախտէ երկու մարդ բռնուած և մահ պատահած չէ։

Պաղտատի քարանթինայի քննիչին կողմէ երէկուան թուականաւ եկած հեռագիր մը ծանուցած է թէ Զօր դաւառի Տէպր ու Էպուքէմալ գաւառակաց մէջ հնտախտ երեւան եկած ըլլալն իմացուելով, Պաղտատի Նահանգն այդ ախտին ճարակմանը դէմ պաշտպանելու համար Էլդիմ անուն տեղը մաքրանոց մը հաստատուեր է։ Այս նպատակաւ դեկոյցներ եղած են նաեւ Հալէպի կուսակալութեան։

ՄԻԼՊԻՑԻի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Միլպիցի Նախապատրաստական վարժարանին ուսուցիչներէն Մէհմէտ Զեքի ու Մէհմէտ Սատէտտին էֆէնտի աղերսագիր մը մատուցանելով կրթական Նախարարութեան բողոքած են նոյն վարժարանի տնօրէնին դէմ, յայտարարելով որ նոյն վարժարանին այս տարուան քննութեանց մէջ անկանոնութիւնք գործուած են։ Այս աղերսագիրը, որ Բ. Դրան մատուցուած էր, Պետական Խորհրդոյ մէջ քննուած և Կրթական Նախարարութեան հետ բանակցութիւնք կատարուելով, եկած պատասխանին վրայ, բողոքոյ գրերն յանձնուեր են ընդհանուր դատախազին։

ՀՆԱՐԻՋԻ ԱՐՏՕՆԱԳՐԵՐ

Տասն և հինգ տարի պայմանաժամաւ հնարիչի արտօնագիրը տրուած է ճարտարագէտ Պ. Շառլ Ցայլասի՝ իւր հնարած նոր տեսակ մէկ ծորակին համար։

Նոյն պայմանաժամաւ հնարիչի երկու արտօնագրեր տրուած են ի փառիզ Փիշլսի ընկերութեան՝ ապականութիւնները վաճելու նպատակաւ հնարած՝ մին շարժուն ու միւսը հաստատուն չուգալ կաթսաներու համար։

Նոյն պայմանաժամաւ հնարիչի արտօնագիր՝ գերմանացի գործարանատէր Պ. Բոլէնի՝ մէջը պարապ անօթներու պատրաստութեան յատուկ իւր հնարած մեքենային համար ինչպէս նաեւ գերմանացի ճարտարագէտ Պ. Պօհէնպլար Ֆրիտիրէի՝ իւր հնարած լուցկիի նոր տեսակ տուփերուն համար։

Նոյն պայմանաժամաւ հնարիչի արտօնագիր՝ ամերիկացի երկու անձանց՝ նոր տեսակ մեքենայի մը համար։

Պ. ՍԻՄԸՆ

Պոլսոյ կապի ընկերութեան, Սկիւտարի-Գատրգիւղի ջրի ընկերութեան և Իսկէնտէրունի քարիւղի ընկերութեան վարիչ Պ. Ֆ. Սիմսն այդ երեք պաշտօններէն միանդամայն հրաժարական տուեր է։

ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՌՈՆ ՍԹԷՖԷՆԻ

Հանդուցեալ Բիսթով փաշայի յաջորդ Պառոն Սթէֆէնի յուղարկաւորութիւնն իր զինուորական աստիճանին համապատասխան հանդիսիւ կատարուեցաւ երէկ ի Բերա։ Գերմանական դեսպանատան մատրան մէջ մեռելական աղօթքներն արտասանուելէ ետք, դագաղն հանդիսիւ փոխադրեցաւ Ֆէրիքէօյի բողոքականաց դերեզմանատունը։ Թափորին առջեւէն կ'ընթանային հետեւեալազօրաց գունդմ մը, առաջնորդութեամբ զինուորական նուագածուաց խումբի մը, Լուրէ և Թօշէ պահակ չոգենաւուց նաւաստիք, ոստիկանք և թաղապետական պաշտօնեայք։ Իբր սգակիր դագաղին կը հետեւէր գերմանական դեսպան Պ. տր Բատովիձ՝ շրջապատեալ դեսպանատան և հիւպատոսարանի պաշտօնէութենէն։ Վեհ. Սուլթանին կողմէ ներկայ էր Ֆօն տէր Կոյձ փաշա։

Թուարկաւորաց մէջ կը նշմարուէին օսմ. ծառայութեան մէջ գտնուող գերմանացի սպայք, ինչպէս նաեւ Վուտս փաշա, Զէյնէլի փաշա և այլ զինուորական սպայք։

Պառոն Սթէֆէն մեռած է ժանտատենդէ (Ընդ.)։

ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ

Պ. Անաթոլ Պարճիլի, յանուն ֆրանսական ընկերութեան մը, Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութենէն մենաշնորհ խնդրած է Պրուսայի ու Ագրիանուպոլսոյ քաղաքներն օդային կազով լուսաւորելու համար։ Նոյն նախարարութեան մասնագէտ խորհրդականն, որուն յանձնուած էր այս խնդիր, խնդրարկուին հետ բանակցելով սկզբնական պայմաններուն վրայ կարծեաց համաձայնութիւն մը գոյացած, իսկ մանրամասնութեանց համար ալ համաձայնութիւն գոյանալու վրայ է, որով երկու քաղաքաց համար զատ զատ պայմանագրեր ու յանձնառագրեր պատրաստուելով պիտի մատուցուին նոյն նախարարութեան։

—Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն, որ կը քննէր Սկիւտարի մէջ թրամուէյի գիծ մը հաստատելու համար Մէհմէտ Արիֆ պէյի և փաստաբան Պօղոսքեան Յակոբ էֆէնտիի կողմէ ընկերակցութեամբ մատուցեալ ծրագիրը, բանակցութիւններ կատարած է խնդրարկուներուն հետ և ասոնք իրենց դրամական կարողութիւնը հաստատող վաւերագիրներ ցոյց տուած ըլլալով, պատրաստուած պայմանագրոյ ու յանձնառագրոյ ծրագրերը մատուցուած են նոյն նախարարութեան, որ յանձնած է զայնս Հանրօգուտ շինութեանց ժողովին։

Այս թրամուէյի գիծ երկու ճիւղ պիտի ունենայ։ Առաջինն Սկիւտարի նաւամատոյցէն մինչեւ Հայոց գերեզմանատունն ու անտի մինչեւ Սարը Գայա և այս գիծ պարտաւորիչ պիտի ըլլայ։ իսկ երկրորդը Սարը Գայաէն մինչեւ Ալէմ Տաղը ու նոյն գերեզմանատան առջեւէն մինչեւ Նուէ Գուլյուսը՝ ըստ կամս։ Թրամուէյի կառքերն, որ ձիով պիտի քաշուին և կամ էլեկտրաշարժ կամ շոգեշարժ պիտի ըլլան, ուղեւոր և կարասիք պիտի փոխադրեն։

Երէկ իրիկուն ժամ 12ին ի Բերա թէվֆիկ Պաշը դեղարանի մը առջեւ հեռաքարիւրելու թմբիր մը համախմբուած էր։ Դեղարանին մէջ գործողութիւնք կը կատարուէին փոքր տղու մը վրայ նորա կլած գնդասեղն հանելու համար, սակայն չը յաջողեցան և տղուն մայրն՝ յոյն կին մը՝ գոյն գրելով դուրս ելաւ յուսահատաբար և մէկ քանի քայլ հաղիւ առած էր, տղան մեռաւ, զոհ երթալով ծնողական դատապարտելի անզգուշութեան։

—Երուսաղէմէն կը գրեն թէ տեղւոյն կառավարիչ Խարահիմ Հագը փաշա առողջապահական չղթաներ հաստատած է, խիստ հսկողութիւնք կը կատարուին և գաւառին կառավարական բոլոր պաշտօնեայք աշխուրջ կը հսկեն։

—Մաղնիսայի նոր կառավարիչ Մուհիտտին փաշա երէկ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ։

—Ռուսական դեսպանատան քարտուղարներէն Պ. Զմիռնոֆ երէկ Օտեսա ուղեւորեցաւ։

—Մախսուսէի Նեֆէս շոգենաւն երէկ Սէլանիկէն մայրաքաղաքս բերաւ 127 նոր զինուորներ։

—Ի Քեաղըտխանէ կառուցուելու վրայ եղող Նշանառութեան վայրին շինութիւնն աւարտած է և բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ հինգշաբթի օր։

—Սկիւտար և Գատը գիւղի ջրի ընկերութեան գործաւորներէն Բաղլը անուն ի. տարեցի մը անցեալ օր նոյն ընկերութեան յատուկ հողաբարձ կառքի մը ներքեւ մնալով վիրաւորուեցաւ և քիչ յետոյ մեռաւ։

—Առողջապահական վարչութեան առաջին քարտուղար և Թ. Հանդէսն լրագրոյ խմբագրապետ Ահմէտ Միտհաթ էֆէնտի մէկ քանի օր առաջ պաղ առած ըլլալով հիւանդացած է և բժշկաց կողմէ կը դարմանուի։

—Պէրութի նորընտիր կուսակալ Իսմայիլ Քէմալ պէյ, նախորդ կառավարիչ Կէլիպոլսոյի, ճամբայ ելեր է իւր նոր պաշտօնատեղին երթալոր համար։

—Կայս. Իրատէ մը հրամայած է որ կայս. Գուրպաղըլը ագարակէն 23 տեսակ լուբիաի ու այլ ընդեղենաց հունտեր զրկուին Հալեպլոյի տիպար ագարակը, մշակուելու համար։ Կայս. սոյն Իրատէն գործադրուած է։

—Երէկ Թոփխանէի նաւամատոյցէն գտնուեցաւ անգլիական հանքածուխ բեռցած շոգենաւի նաւաստիներէ միոյն դիակն։ Այս նաւաստի քսան օր առաջ ծանր ինկած ըլլալով խղդուած էր։

—Նախընթաց օր, Գատրքէօյի մէջ, նաւավար մը գինետուն մը կը մտնէ եւ շիշ մը օղի բերել կուտայ, որուն գինը կը հարցունէ գինեպանին։ սա կը պատասխանէ թէ տասը փարա է։ Այս խօսքին վրայ նաւավարը ատրճանակ մը կը հանէ գրպանէն և կը պարպէ գինեպանին վրայ որ ծանրապէս վիրաւորուելով տուն կը տարուի։

—Ռուսիոյ կայսեր սենեկապետ Պ. Նիքոլա Քրուբանքի և իր կինն երէկ առաւօտ Օտեսայէն մայրաքաղաքս ժամանեցին։

ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ
ԲԵՐԱՑԻ

Ֆրանսական խումբն վաղը գիշեր արտասովոր ներկայացում մը պիտի տայ, որուն համար մեծամեծ պատրաստութիւնք տեսնուած են։ Պիտի ներկայացուի

ԱԼԻԲԱԲԱ (ABLIBABA)

օրէնքի չորս արարուածով, որք կը պատկերեն հնդկական տեսարաններ։ Հեղինակութիւն Ալպէր Վանլու և Վիլլէյմ Պիւգնաք, երաժշտութիւն Շ. Լէքօքքի։

Այս ներկայացման համար պատրաստուած են բոլորովին նոր դէկորներ ու նոր տարազներ։ Մանրամասնութիւնք վաղուան թերթով։

ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԵԱՆ
Ի Շահզատէ Պաշի

Մնակեան էֆէնտիի օսմ. թատերական խումբը վաղը գիշեր պիտի ներկայացուցէ, ի նպաստ Տ. Մատթէոսեան էֆէնտիի, առաջին ծեր կատակերգակ նոյն խումբին,

ՍԻՄՕՆԼԷ ԵՒ ՍԱՌԻ

Թատերգութիւն 10 արարուածով։

Քրազիէ տը Մոնթէբէնի հանրածանօթ վէպին թատերգութիւնը, որ այնքան յաջող ներկայացուեցաւ արդէն ամիս մը առաջ ի Բերա, տարակոյս չկայ թէ մեծ ընդունելութիւն պիտի գտնէ Շահզատէ-Պաշչի թատրոնին մէջ։ Այս ներկայացումը կազմակերպուած է ի նպաստ օսմ. խումբին վարիչի և ճարտար դերասաններէն Մատթէոսեան էֆէնտիի, որ արժանի է հասարակութեան քաջալերանաց։

ՀԵՌԱԳԻՐ ԼՈՒՐԵՐ
Կ. ՊՈԼՍՈՅ ԳՐՕՏԱՍԱԼՈՒՆՔՆԵՐՈՒՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ԱՆԳԼԻՈՅ ՊԱՆՔԱՅԻՆ

Անգլիոյ Պանքային երէկ հինգշաբթի (3 դեկտ.) հրատարակեալ շաբաթական հաշուեկշիռն հետեւեալ տարբերութիւնները կը ցուցնէ, բաղդատմամբ նախորդ շաբաթուն։

Պատրաստ մետաղադրամին վրայ աւելցած է 533 հազար անգլ. ոսկի։

Պանքոտմսներու պահեստէն պակսած է 54 հազար ոսկի։

Գանձելի փոխանակագրաց և այլ առեւտրական թղթոց մէջերքին վրայ աւելցած է 670 հազար անգլ. ոսկի։

Հետեւապէս, Անգլիոյ Պանքային դիրքը վերջին եօթնեկին մէջ նպաստաւոր եղած է, քանի որ իւր պահեստք այժմ այնպէս կը համեմատին իւր յանձնառութեանց ինչպէս 44 կը համեմատի առ հարիւր։ Նախորդ շաբաթուան համեմատութիւնն էր $43^{11}/_{32}$ առ հարիւր։

Այս պայմանաց մէջ, Անգլիոյ Պանքային Տնօրէն Խորհուրդն իւր երեքի՝ հինգ շաբաթի աւագ նստին մէջ որոշեց 100ին չորսէն երեքուկէսի իջեցնել զեղչի սակը։

ՊԵՐԼԻՆ, 17 դեկտ.— Բայսթակը, շարունակելով Աւստրիոյ հետ առեւտրական դաշնագրաց ընթերցումն, ասուար մեծամասնութեամբ ընդունեց ցորենի վերայ մաքսերն և վաւերացուց գինիի մաքսերը 66ի դէմ 200 ձայնով, նոյնպէս ասուար մեծամասնութեամբ վաւերացուց միւս առաջարկներն և սակագնոյն ամբողջութիւնը։ Վիճաբանութիւնն վաղը պիտի շարունակուի։

ՔԷՕԼ

պենէթ պաշտօնէ՝ քաշուի՝ և տեղն անցնի զօրավար Անենքով։ Նոյն լրագիրը կ'իմանայ թէ մեծ քանակութեամբ ցորեն հարաւային երկաթուղիներով չի կրնար փոխադրուիլ՝ կարգադրութեանց անբաւականութեան պատճառաւ և Զարը շատ նեղացած է։

— —

ՓԵԹԵՐՍԳՈՒՐԻ, 16.—Լրագրաց ըսածին նայելով, Պաքուի քարիւղի արտադրիչք ընկերակցութիւն մը կազմած են օտար երկրաց մէջ քարիւղն հաւաքապէս վաճառելու համար։

— —

ՎԻԵՆՆԱ. 17.— Հանգուցեալ Հանրիկ և Սեկիսմունտ արիւդուքներու եղբայր արիւդուքս Էրնէսթ սաստիկ տենդոտ վիճակի մէջ հիւանդացաւ։ Գիշերը շատ անհանգիստ էր։ (Արդէն ծանուցուած է թէ կայս. գերդաստանին մէջ ինֆլուէնցա կայ։ Ս. Խ.)

ՓԱՐԻԶ, 17.—Սէրէլ կիմանայ թէ արմատական Պ. Միլվուա հարցում պիտի ուղղէ առ Պ. Ռիպօ Պ. Շատուրնի Պուկարիայէն արտաքսման վրայ։

ՅՈՒՌՆԵԻԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ՓԱՐԻԶ, 17.—Երեսփ. Ժողովն երկուշաբթի օր պիտի սկսի վիճաբանել կառավարութեան ներկայացուցած օրինագծին վրայ իմաստն Ֆրանսայի առեւտրական յարաբերութեանց օտար պետութեանց հետ, առաջիկայ փետրուար ամսէն անդէն։

ՊԻԱՐԻՑ, (հար. Ֆրանս) 17.—Պ. Կլատսթոն ստ հասաւ։ Առողջական վիճակն ալէկ է։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 6 Դեկտեմբեր

ԸՆԹԱՑԻԿ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ	109 3/8
3 » Բարիզի »	23 05

Օսմանեան Քոնսոլիտէ

Երէկ երեկոյ գոց. [Ռէնտ. D. Սերի]	19 38
Բերայի մէջ »	— —
Առաւօտուն բացուելուս »	20 01 1/2
Կէս օրին »	19 39
Թահվիլաթը Օսմանիէ երէկ երեկոյ	76 09
» » ժամ 3ին	76 13

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Փոխառութիւն A. Սերի	44 1/8
» B. »	25 5/8
» C. »	20 01 1/2

ԲԱԺՆԵՏՈՒՄԻՔ

Սօսիէթէ ժէնէրալ	Մէջ. Լր.	4 25
Ֆրէսի ժէնէրալ	» »	8 10
Պանք տը Գոնս	» »	4 32
Սօս. Շանմ. է վէլէօր	» »	4 26
Ռէմի	» »	14 36
Թրամուէյ	» »	605
Բուսէլիի Երկաթուղի	Ֆր.	64 3/8
Բաժնեթուղթ Լավրիսմի Գ. Կ.		122

ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ՀՂ.	100
20 Ֆրանքոց	»	87 10
Անգլիական ոսկի	»	110
Մարք [Գերմանական ոսկի]	»	107
Իմպէրիալ	»	90
Ֆրիսկց	»	51 15
Բուպլի թղթադրամ	»	9 26
Մէճ. արծաթ [մարք.]	»	107 28
Մանր արծաթ	»	— —
Մէթալիք	»	97 20
Թասֆիյէ	»	21
Տակս Ղալաթիոյ Սակարանի	»	7

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ԲԱՐԻԶ, 17 Դեկտ., ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	Գ. Կ. 95 25
» » 4 1/2 %	105 05
Օսմանեան քոնսոլիտ Սերի Դ	18 50
» երկաթուղի	64 50
» Բէժիի բաժնեթուղթք	343 75
Պանք Օթոման	550 62
Սօսիէթէ ժէնէրալ	— —
Դրէսի Լիոնէ	783 75
Իտալական Ռանթ 5 %	91 90
Բրիօրիթէ Թիւրք (1890)	418 12
Եգիպտական միացեալ	482 81
Օսմ. մնաց. արժեթուղթ	446 87
Օսմանիյէ (Օսմանեան քոնսոլիտ)	355
Զէք Լոնտրայի վրայ	25 21

ԼՈՆՏՈՆ, 17.— ժամ 3 վայր. 55 երեկոյ

Անգլ. քոնսոլիտ	95 1/2
Օսմ. » Սերի Դ.	18 31
» » » Ա.	44 1/8
» » » Բ.	25 5/8
» » » Գ.	18 31
Փոխառութիւն 1877	— —
Պանք Օթոման	11 7/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիյէ)	95 3/4
» առանձ. (բրիվիլէժիէ) 1890	90 1/4
Տօմանիալ (փոխառ. Ռուշիտ)	102
Իսլամական 1890	94 7/8
Ադրիանի երկաթուղի	22 1/2
Դանուպայի երկաթուղի	15 1/2
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 400

ՎԻԵՆՆԱ, 17.— ժամ — վայր —

Օսմանեան երկաթուղի	31 25
» Բէժիի բաժնեթուղթք	157 25
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	118 20
» Փարիզի »	46 80

ՊԵՐԼԻՆ, 17.— ժամ — վայր. —

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 200
» Փարիզի »	81 40
Բուպլ թղթադրամ	200
Օսմանեան երկաթուղի	61 12
Օսմ. քոնսոլիտ Սերի Դ.	18 20
Օսմ. Ռէժի	— —

— —

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 17 — ժ. — վ. — երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	95 22
Օսմանեան քոնսոլիտ Դ.	18 50
Օսմանեան երկաթուղի	— —
Օսմ. Բէժի	— —
Բրիօրիթէ Թիւրք	— —
Օսմ. Մաքս. արժեթուղթ	— —
Պանք Օթոման	548 75
Օսմանիյէ	— —

Լաւ տեսակ բըռնալի ածուխ կը վաճառուի Գուլդաքուլի դուրսըքէյոց եկեղեցւոյ քով 23 թիւ վաճառանոցին մէջ։ Ցանկացողք գոհ պիտի մնան թէ՝ տեսակին լաւութենէն և թէ գնոյն ժամանակին։ 6—10

ԽԵԼԱԳԱՐԸ

Որպէս Աթէնք, Իզմիր և այլ քաղաքներ, Պուքրէշ եւս մին է այն վայրերէն ուր ամէն տեղերէ ճանձրացող բախտախնդիրք կը դիմեն ապրուստ որոնելու։ Այդ քաղաքին մէջ ծանօթացայ Գառնիկ անուն Պոլսեցի երիտասարդի մը, որպէս կը ծանօթանայի Պոլսէն եկող բոլոր ազգայնոց հետ։

Առաջին օրէն իսկ համակրեցայ իրեն և անկեղծապէս վշտակից էի այն տառապանաց որովք լի էր իւր կենաց պատմութիւնն, զոր պատմած էր ինձ և ամենուն։

Արդարեւ՝ «Վ չպիտի արգահատէր լսելով թէ՝ սոյն տարաբախտն, իւր ամուսնութենէն մի քանի օրեր առաջ, իւր խօսեցեալն կորսնցուցնելու դժբախտութիւնն ունեցած էր։ մանկամարդ և գեղանի աղջիկ մը՝ զոր կը պաշտէր։ Եւ ինք, սոյն դժբախտութենէն յետոյ չը կարողանալով այլ եւս Պոլսոյ մէջ, իւր սիրելոյն շիրմին մօտ բնակիլ, ամենայն ինչ թողած և յօտարութիւն գաղթած էր իսկոյր մխիթարութեան։ Եւ պատմած ատեն դառնապէս կ'արտասուէր։ Արդէն իւր սովորական մելամաղձիկ և տխուր կերպարանքը գրաւական մ'էր իւր պատմութեան ստուգութեան։ ակէց զատ, ինչո՞ւ պիտի ստէր։

Սոյն վշտակրեալ երիտասարդն արհեստիւ ճարտար շապկագործ մ'էր։ և տեղացի մի քանի բարեսէր ազգայնոց օժանդակութեամբ խանութ մը բացաւ մեծ արդեամբ։ զի այն ատեններն Ռուս սպայներ կը վխտային քաղաքին մէջ և անգուշական առուտուր մը կը տիրէր։

Հազիւ թէ տարի մը բոլորած էր և Գառնիկ կ'ամուսնանար իւր մի քանի ոչ այնքան պատուաւոր բարեկամաց միջնորդութեամբ, որոց հետ մտերիմ յարաբերութեանց մէջէ էր։ Այս պատճառաւ ես՝ թէեւ իրմէն հեռանալ պարտաւորուած էի, սակայն երբ դիպուածն օժանդակէր, պահ մը իւր մէրերանոցը կը հանդիպէի։

Երեք տարիներ անցած էին արդէն և Գառնիկ խաղաղ կեանք մը կը վարէր։ Իրաւ է որ մերթ ընդ մերթ այնպիսի չուայտ ժամեր կ'անցընէր որք իւր ամուսնացեալ լուրջ մարդու համբաւն կ'աղարտէին։ սակայն սոքա հազուադէպ էին և կը վերագրուէին իւր երիտասարդութեան։

Աշնան ցրտին առաւօտ մ'էր։ Գառնիկի խանութին հանդիպած էի գնում մը ընելու համար, և այս առթիւ շապկագործն սկսաւ խօսիլ ինձ Պոլսոյ և իւր անցեալ կենաց վրայ։ Կ'ըսէր թէ ծանր բեռ մը կը կրէր սրտին վրայ և զայն կը փշրէր։ եւ այդ պատճառաւ էր որ երբեմն յիմարութիւններ կը գործէր վերջէն զղջալու պատմանաւ։ Կարծեցի թէ իւր վախմանաւել նշանածին կ'ակնարկէր և կը ջանայի զինքը մխիթարել, ըսելով թէ այլ եւս ամուսնացեալ էր. թէ իւր սիրասուն զաւակունք զինքը պիտի մխիթարէին. զի հարկ է ըսել թէ Գառնիկ արդէն երկու զաւակաց հայր էր։

Եւ մինչ սոյն օրինակ խօսքեր կը փոխանակենք... կին մը ահա ներս կը մտնէ խանութէն, ալեւոր մարդու մը ընկերակցութեամբ որ փէս կը կրէ։ Բարձրահասակ սեւազգեստ կին մ'է յոյժ գունատ և նիհար։ այլ վաղանցիկ գեղեցկութեան մը հետքերն ակներեւ են։ Ուրուականի մը յամր քայլերով կը յառաջանայ։ բայց ծունկերն կը դողդողեն և ձախ ձեռքով սեղանի մը վրայ կը յենու։ մինչ միւսն օդին մէջ բարձրացուցած, վրէժխնդիր հըրեշտակին պէս, կարծես գերագոյն մէնիա մը տալու պատրաստ է։ Իւր թափանձիկ շրթունքը կը շարժին, բայց խօսելու կարող չէ։ յուզումն զինքն յաղթած է։ Վերջին ճիգ մը կը թափէ և կը յաջողի արտասանել բառ մը միայն, բառ՝ որ իւր հոգւոյն հմայն դառնութիւնն ու նողկանքն յինքն կ'ամփոփէ։

—Վա՜տ։

Եւ այդ կնոջ նուազուն աչերէն բոցոյ նշոյլներ կը ցայտեն ահեղընկեց շանթերու նման։

Բան մը չեմ հասկնար սոյն տեսարանէն և Գառնիկի կը դառնամ լուսաբանութեան համար... Այլ, նա մոռէ արձան մ'է կարծես, մահատիպ, դողդոչուն և մազերն ցնցուած են գլխուն վրայ։

Ուրուականը նոյն անողոք վիճակին մէջ է։

Սարսափն յետին աստիճանի տրած էր Գառնիկի վրայ, որ հուսկ ուրեմն զգայարանքի գեւոնը փոխուեցաւ, դիցուհւոյ մը անուն արտասանելով, որ հաչանքի մը պէս օդին մէջ ցնդեցաւ։ Նուարեցայ բոլորովին և ընելիքս չէի գեւոր սոյն ողբերգութեան մէջ ուր դեր մ'ունէի։ Վերջապէս յառաջացայ դէպ ի սեւազգեստ կինն բացատրութիւն մը խնդրելու մտօք։ Սակայն նա դառնապէս ժպտելով, նոյն յամր քայլերով խանութէն դուրս ելաւ։

* *

Պոլսոյ կարեւորագոյն թաղերէն միոյն մէջ Լեւոն անուն երիտասարդ մը կը բնակէր։ գեղադէմ, յոյժ սրամիտ և սրախօս անձ մը, որ իւր հայոյն ծանօթներն կը զուարճացնէր իւր զաւեշտական խօսքերով։ Ասկէց զատ իւր բանուկ արհեստին շնորհիւն շատ դրամ կը շահէր, որով Լեւոն իւր ծնողաց... պատուհասն էր։

Սոյն եղբայրութիւնս հակառակ չը պիտի թուի հարկաւ, երբ ըսեմ թէ Լեւոն իւր մի քանի լաւ յատկութեանց հետ իւր անձին վրայ միացուցած է նաև մոլութեանց ամենէն զարհուրելին։ խաղամոլութիւն։ Իւր մի քանի մտերմաց հետեւելով է որ ենթարկուած էր սոյն ուեակութեան, որոյ պինդ գրինախառնուժէն անկարելի եղած էր ազատիլ։ Բիւր անգամ երդումը ըրած էր չը խաղալ։ ի զո՞ւր։ Անհրաժեշտ էր որ զգայ այն անբախտելի յուզումն զոր կ'արտադրէր շաղն ու զէնը։ Երբ առատ դրամ ունենար անծանօթ եւ բռնի զօրութիւն մը զինքը կը վարէր ի խաղատուն, ուր կերթար նախ չը խաղալու մտադրութեամբ, միայն դիտելու համար։ Բայց երբ տեսնէր այն կանաչ սեղանն որոյ վրայ ոսկւոյ դէղերի խոշոր մը կը կազմէին սիրուն նուագով, անչէջ ծարաւ մը կը զգար, իւր թէ անջրդի անապատ մը, ցաւրթի ոգի սիսի մը մէջ փոխադրուած լինէր։ Եւ կը նստէր ու կը խաղար մինչեւ առաւօտ, լուրջ եւ անխօս։ միայն մեքենական շարժումներ ընելով եւ լակոնական բառեր արտասանելով։ Ա՛լ ուրիշ բանի չէր մտածեր։ ծնողք, բարեկամ, խանութ, ամե՛ն բան հոն էր և անկէց դուրս ամէն բան օտար։ Խաղը՝ իւր ոգեղին բոլոր ուշն ու զօրութիւնը կը կեդրոնացնէր մէկ կէտի վրայ, ինչպէս խոշորացոյց մը կ'ամփոփէ արեւուն ճառագայթները։ Լաւ խաղացող մ'էր, երբէք շահը կամ զէնը իւր խոնջեալ դէմքին մէկ ջիղն չէր շարժեր։ Եւ երբ այդուն խաղատունէն դուրս ելնէր, իւր բոլոր գրպաններն ալ դատարկ էին։ Զղջման որդը կը սկսէր կրծել զինքն, երդումներն կը նորոգէր որոց ինքն ալ չէր հաւատար։ Կը գիտէր խեղճը, ճանապարհին վրայ, սեղանաւորաց տուփերուն մէջի ոսկիներն, որք լուրջ և խոհուն կերպարանքով կը հանդչէին։

Այսպէս կը փճացնէր կեանքն սոյն անխորհուրդ երիտասարդն, վատնելով խաղատանց մէջ իւր ուենցածն եւ չունենացածն ալ։ Իւր հէգ ծնողքն շատ կը զզջային չափազանց սիրելնուն համար զայն մինչ դեռաբոյս էր տակաւին։ Ի՜նչ օգուտ, մէկ հատիկ էր եւ պէտք էր աչք գոցել նորա բոլոր ստահակութեանց։ Մանաւանդ մայրն որչափ կուրախանար երբ անոր հայհոյելը լսէր կամ մէկ չար գործին ականատես լիներ։

Բայց հիմա եղածն եղած էր։ Այժմ Լեւոն մեծ մարդ էր եւ իւր ծնողացը վըրայ կը գուրգուրար, երբ իրեն բարոյականի դասեր տալու չեղեէին, որոնցմէ շատ չէր ախորժեր։

Ի՜նչ ընելու էր ուրեմն։ Ինչո՞վ կը զգաստանան անկարգ երիտասարդներն, եթէ ոչ սովորական դարմանով։ ամուսնութեամբ։ Կ'երեւակայէին որ՝ եթէ իւրեանց յորդորներն անպտուղ մնացած էին ցայն վայր, անշուշտ գեղանի կնոջ մը փայփայանքն ու համբոյրախառն յորդորներն զայն ի կարգ պիտի բերէին։ Ուստի կը մնար գտնել այն երջանիկ աղջիկն, որոյ պիտի յանձնուէր Լեւոնի ուղղութեան նը-ւիրական պաշտօնն։

* *

Իւսկիւտարի բարձանց վրայ սիրուն տնակ մը կար՝ ծառազարդ պարտէզի մը խորն պահուըտած։ Սոյն տան մէջ կը բընակի պատուական ընտանիք մը որ կը բաղկանայ երէկ կիներէ։ մայր, մեծ մայր, մօրաքոյր եւ Աստղիկ անուն չքնաղեղ աղջիկ մը։ Աստղիկ իրօք գեղանի էր եւ իւր ոսկեթել գանգուր վարսերով, կապոյտ ե. կնագոյն աչերովն ու բարեձեւ հասակաւն Ալպիոնի դստերքը կը յիշեցընէր։ Սպիտակագեղ ճակատ մ'ունէր որուն վրայ արդէն դրոշմեալ էին իւր մայրն զգացումներն։ Երբ խօսէր, կարծես սիրտն իւր վարդ շրթանց կը բարձրանար։ Զուներէ գիւանագիտաց յատուկ այն անթափանցելիութիւնն։ Ընդհակառակն Աստղիկ թափանցիկ էր արեւուն ճառագայթին եւ վարդենւոյ շողին պէս։ Նենգութիւն չկար իւր խառնուածքին մէջ, պարզ էր որպէս հոգին։ Միացուցէք սոցա նաև օրիորդի մը վայելուչ համեստութեան և պարկեշտութեան զգացումներն, և ամբողջական նկարագիրն պիտի ունենանք անոր որ առաքելուհւոյ մը դերն պիտի լնուր Լեւոնի մօտ։

Սա մեծ դժուարութեանց չը բաղխեցաւ տիրանալու համար սոյն գոհար սըրտին որ անպարսպ քաղաք մ'էր պաշտպանուած չը լինելով խորամանկութեան որմերէն։ Աստղիկ սիրեց զայն, այո՛, իւր անգրանիկ սիրոյ հմայն ուրիշ։ Լեւոն ալ իւր կողմանէ հաւասար սէր մը կը տածէր և իւր սիրոյն մտադրաղ, մէկդի թողուց խաղն և սկսաւ իւր ապագայ կենաց կարգադրութեամբ զբաղիլ։

Այժմ ընենք թէ Աստղիկ և իւր ընտանիքն անդուլ աշխատութեան և խնայողութեան շնորհիւ երկու հարիւր ոսկւոյ գումար մը գոյացուցած էին, որ ազգական օժիտ պիտի լինէր։

Լեւոն որ արդէն վեց ամսէ ի վեր նըշանած է, այլ եւս իւր խօսեցելոյն տնէն դուրս չելլեր և նոյն իսկ հոն կը գիշերէ երբեմն։ Մտերմութիւնն յոյժ զարգացած է, իրեն հետ բերելով հաւատարմութեան զգացումն։ Ա՛լ գաղտնիք չունին միմեանց համար։ Ամեն ոք միւսին դրամական կացութեանը տեղեակ է։ Ցայտնի բան մ'է թէ Լեւոն ստակի պէտք ունի իւր խանդարեալ գործոց ընդ փոյթ կարգադրման համար։ Ուստի Աստղիկ օժանդակել ուզելով իւր սիրելւոյն, յապացոյց իւր սիրոյ, բոլոր ազդեցութիւնն ի գործ դրաւ եւ ծնողքն համոզելով, օժիտը բաղկացնող ամբողջ դրամն Լեւոնի ափը լեցուց։

Կա՛ անպարակոյս յոյժ գոհ մնաց եւ ինքզինքը շնորհաւորեց այսպիսի անգիւտ կին մը գտած լինելուն համար։ Եւ մինչ սոյն քաղցր մտածմամբ դէպի ուն կ'երթար, խաղատան բարեկամներէն մին կ'ելլէ իւր դէմ, որ իւր կենդանի ուրախութիւնն յայտնելէ յետոյ պոյն տեսութեան առթիւ, կը հրաւիրէ զինքն որ ի խաղատուն ընկերանայ իրեն ուր ինք մեծ շահեր կ'ընէ։

Ցաճախ ոչինչ դէպք մը մեծ արդիւնքներ կ'ունենայ։ այս անհերքելի է։ Այս ալարգ հանդիպումն աղետալի պիտի լինէր Լեւոնի համար։ Համայն տարրերք և իրք դաւադրած էին իրագործելու սոյն հանդիպումն։ Ցիրաւի եթէ սոյն նրբին հաշիւներն վրիպին մեծագոյն ռազմագէտներէ, երբէք չեն վրիպիր դիպուածին պէս մեծագոյն հաշուագէտի մը ձեռքերէն։

Լեւոն աւելորդ համարեց դիմադրելն, զի վտահ էր իւր անձին վրայ։ Ի՜նչ, ինք որ այնքան ատեն թղթի երես տեսած չէր, կարելի՞ էր մինթէ նորէն փորձուիլ։ Նոյն կանաչ սեղանը, նոյն թղթերն ու թէթեւ ոսկիները։ Լեւոն չը խաղաց՝ բայց խմեց։ Գրանիկներ և գարեջուր հրամցուցին իրեն, որք ի՛գ հոգ մոռցնել տուին իրեն Աստղիկ և ծնո՛ղ։ Անչէջ ծարաւն նորէն սկսաւ տանջել զինքը սաստիկ կերպիւ, որոյ ի զուր ջանաց դիմադրել։ Ուեզեց խոյս տալ, հեռանա՛լ։ բայց աթոռին վրայ գամուած էր կարծես։ Եւ սկսաւ արգարացուցիչ փաստեր պրպտել իւր ցանցառ ուղեղին մէջ։ Ցիրաւի ի՜նչ ամօթ իրեն պէս մէկուն որ, որ կանանց խօսքին անսալով, զրկուէր խաղին հաճոյքներէն...։ Եւ ո՞վ կ'ապահովէր զինքն թէ իւր գըրպանի գումարն չը պիտի եռապատկէր։ Մեծ պատերազմ մը կար սրտին մէջ։ Եւ գուցէ նոյն պահուն ողջմտութիւնն յաղթանակէր եթէ անիծեալ բարեկամին ձայնը զինքն ի խալ չը հրաւիրէր։ Վճիռը արուած էր։ Լեւոն սկսաւ խաղալ այնպիսի մէկու մը եռանդեամբ որ իւր տարրին մէջ կը զգայ զանձն։ Առիւծի մը պէս որ երկար ատեն երկաթեայ վանդակի մը մէջ փակուած մնալէ յետոյ իւր անծայրածիր և կիզիչ անապատը կը դառնայ և կ'արշաւէ, իւր ընդդարմացեալ ջղերն փարձելու համար, Լեւոն նախ ոսկի մը նետեց, ապա ուրիշ մը և տասը վայրկենի մէջ նոյնքան ոսկի կորցուց։ Ընկերկիլ անկարելի էր այլ եւս, զի կորսնցուցածն ետ առնել պէտք էր։ Կորսնցողի մը յատուկ բարկութիւնն և յիմար քաջութիւն ունեցաւ այս անգամ։ խաղաց և տուաւ։ տուաւ մինչեւ ցյետին ոսկին, ապա շղթայն ու ժամացոյցն, և ուրիշ բան չը կար։

Երբ արշալոյսին տուն դարձաւ, գըրպանին մէջ միայն... գլանիկ մը կար զոր վառեց և սկսաւ անյագութեամբ ծխել։

* *

Եւ կը խորհէր խեղճը իւր դժբաղդակացութեանը վրայ։ Ի՞նչ պիտի լինէր իւր վիճակն։ Իւր ձեռքովն իսկ մի քանի ժամերու մէջ փճացուցած էր իւր ներկայն ու ապագայն։ Ո՛հ, Աստղիկ... ինչպէ՞ս պիտի երեսէ նորա դէմ։ Եւ Լեւոն ինքզինքն այնքա՛ն գձուած, վատ զգաց, որ որոշեց անմիջապէս իւր անիծեալ կենաց վերջ տալ։ և այդ տխուր մտադրութեամբ դէպի ծովափ մը դիմեց մոլար քայլերով։

Հոսանքն արագընթաց կը սահէր իւր ոտից առջեւ, ողողելով արփենոյն առաջին ճառագայթներն որք իւր վճիտ ալեացը մէջ կը ցոլանային։ անդին դալաքեղ ծառի մը ոստերուն մէջ թռչնիկ մը կը դայլայլէր քաղցրանուագ։ Լեւոն խոր վիշտ մը զգաց սրտին մէջ, բաժնուելուն կեանքէն այդ հասակին մէջ և ջերմ արտասուքներ սկսան ուղղորէն վազել աչերէն։ Եւ կը դիտէր սոյն ընդարձակ ծովն որ կուլ պիտի տար զինքն և անընակ կղզւոյ մը եզերքն պիտի նետէր իւր անճանաչ նեխեալ դիակն։ Գլուխ պտոյտ մը ունեցաւ և գուցէ այդ վիճակին մէջ կորսուէր. երբ գեղանի գուարթնոյ մը ուրուականը ներկայացաւ իւր երեւակայութեանը և իւր ձիւնակերտ բազուկներն առ նա կարկառելով, մեղմագին ձայնիւ մրմնջեց.

—Ո՛հ, եկու, եկո՛ւ...

Աստղիկ էր այդ հրեշտակը։

Լեւոն սթափեցաւ կարծես խոր քունէ մը։

—Ո՛հ, ըսաւ ինքնին, մեռնելէ առաջ գոնէ անգամ մը զայն տեսնեմ. անգամ մ'ալ հիանամ վրան, թէեւ անարժան եմ։

Ետ դարձաւ եւ մակոյկով մ'անցաւ յիւսկիւտար, որոյ զառիվերներէն մագլցելով վերջապէս հասաւ այն տնակին առջեւ որ իրեն համար երջանկութեան բոյն մը պիտի լինէր, և ուր այնքան համարձակութեամբ կը մտնէր առաջ։ Բայց հիմա պարագայները փոխուած էին, անիծեալ մ'էր ինքզինքն։ Զը յանդգնեցաւ անցնիլ այդ սեմէն, վախնալով թէ մի գուցէ իւր վրդովեալ կերպարանքն զինքը մատնէր։ Պարտիզին որմին ներքեւ կծկտեցաւ մուրացկի մը նման, անշարժ եւ անորոշ։ Եւ մինչ ամենէն անիրականալի գաղափարներ կը յղանար, ահա հրեշտակային ազուն ձայն մը իւր ականջին կը հասնի։ Ակէնքին սիրտն սաստիկ կը տրոփէր, ոտքի ելաւ դողդոջելով եւ հինաւուրց որմին վրայ ճեղքուածք մը գտաւ որուն յառեց իւր անյագ աչերն։ Աստղիկ էր, որ առաւօտեան սպիտակ զգեստներով, հերարձակ, պտոյտ մը կ'ընէր պարտիզին մէջ, ծաղկանց այց կ'ուտար։ Ա՛յն էր առաւօտեան երգչուհին։ Լեւոն արձանի պէս անշարժ զայն կը դիտէր եւ յիշողութեան մէջ փնտռել կը ջանար թէ արդեօք խօսած էր երբէք այդ հրեշտակին հետ, հպա՞ծ էր նորա ձեռաց։ Իւր խօսեցեալն էր մի՞թէ այն, որ՝ իրեն՝ որ խարերայ մ'էր, ինչ երազ, ի՞նչ պատրանք։

Զայնը հետզհետէ կը նուազէր եւ կը կորսուէր տան մէջ։ Պատկերն անհետացած էր։

Լեւոն ետ դառնալ սկսաւ գինով մարդու մը քայլերով։ Սակայն ճանապարհին յոգնութիւնք տակաւ առ տակաւ իւր մտային կարողութիւններն սթափեցուցին։ Սկսաւ խորհրդածել, որոյ արդիւնքն եղաւ անձնասպանութենէն ապրելու որոշում մը, փա՛ռք։ Եւ արդարեւ այն օրն իսկ պէտք եղած կարգադրութիւնն գործադրելով, դարանին մէջ գտնուած մի քանի ոսկիները գրպանեց եւ առանց ոչ ոքի իմացնելու Պոլսէն հեռացաւ։

* *

Իսկ հէգ Աստղիկ անդին կ'ոբգէր, երջանիկ ապագայի մը յուսովն սնանելով։ Աւա՛ղ, ինչ յուսախաբութիւն, իւր սիրտն ու ինչքը կողոպտած էին մանգամանչ։ Ի՜նչ անտանելի յուսահատութեան մէջ ինկաւ երբ մի քանի օր յետոյ իմացաւ խաբէութիւնն։ Իւր սէրը փոխուեցաւ ատելութեան եւ նողկանաց։ Սակայն քարշական վիշտն այնքան սաստիկ եղած էր, որ ծանրապէս հիւանդ ինկաւ և տառապագին անկողնոյ ծառայեց երկու տարիէն աւելի։

Ո՜հ, եթէ կարելի լիներ վրէժ լուծել այն վատէն որ պատճառ եղած էր իւր բոլոր դժբախտութեանց։ Իւր երկարատեւ հիւանդութեան ամենածանր ճգնաժամին մէջ իսկ, գերեզմանին սեմին վրայ, վըրէժխնդրութեան գաղափարն իրմէն չէր հեռացած. այդ զգացման տենդն ապրեցուցած էր զինքը, զի Աստղիկի սէրն անկեղծ և խորին էր։

Հազիւ ապաքինած, օր մը դիպուածաւ, զոր երկար կը լինի պատմել այս տեղ, Աստղիկ տեղեկութիւն կ'առնու թէ ապերախտը Պուքրէշ կը գտնուի և բարեկեցիկ կեանք մը կը վայելէ։ Հակառակ իւր մօր թախանձանաց, հեռաւոր ազգականի մը ընկերակցութեամբ հոն կ'երթայ և չանթահար կ'ընէ զայն, որպէս տեսանք վերեւ։ զի հարիւր ընթերցողք հաստատեալ են արդէն թէ չապկագործ Գառնիկ եւ Լեւոն մի եւ նոյն անձն է։

Հէգ աղջիկը իսկոյն տեղւոյն թաղխորհրդոյն կը դիմէ և արտասուագին պատմելով եղելութիւնը, իրաւունք կը պահանջէ։ Հետեւեալ օրն ամբողջ քաղաքն Գառնիկի ճշմարիտ անունը գիտէր։

Խորհուրդն իւր ներկայութեան կը կոչէ զՀեւոն, որ հեռի ուրանալէ, հետը բերած է գողցած ամբողջ գումարն զոր կը յանձնէ առանց իսկ նայիլ համարձակելու Աստղիկի, որոյ աչաց հուրէն կը սոսկայ։ Բայց անողոք աղջիկն, մինչ սա կը հեռանայ, կը մտնենայ անոր և ականջէն վար կը փսփսայ։

—Բրածիդ փոխարէն մէկ բան միայն կը խնդրեմ Աստուծմէ։ խենդեենա՞ս եւ լեռներն իյնաս։ . . .

Լեւոն խոյս կ'ուտայ, դողդոջ ձեռքերքն մազերուն մէջ մղելով։

Աստիկ մի քանի օրէն Պոլիս դարձաւ։ Իւր դերն աւարտած էր։

Ի՞նչ պատիժ, Աստուած իմ։ Այլ եւս անպատիւ, խայտառակ մարդ մ'էր ինքզինքն։ Իւր ձեռքովն իսկ մի քանի ժամերու մէջ փճացուցած էր իւր ներկայն ու ապագայն։ Ո՛հ, Աստղիկ... ինչպէ՞ս պիտի երեւէ նորա դէմ։ Եւ Լեւոն ինքզինքն այնքա՛ն գձուած, վատ զգաց, որ որոշեց անմիջապէս իւր անիծեալ կենաց վերջ տալ։ և այդ տխուր մտադրութեամբ դէպի ծովափ մը դիմեց մոլար քայլերով։

Հոսանքն արագընթաց կը սահէր իւր ոտից առջեւ, ողողելով արփենոյն առաջին ճառագայթներն որք իւր վճիտ ալեացը մէջ կը ցոլանային. անդին դալաքեղ ծառի մը ոստերուն մէջ թռչնիկ մը կը դայլայլէր քաղցրանուագ։ Լեւոն խոր վիշտ մը զգաց սրտին մէջ, բաժնուելուն կեանքէն այդ հասակին մէջ և ջերմ արտասուքներ սկսան ուղղորէն վազել աչերէն։ Եւ կը դիտէր սոյն ընդարձակ ծովն որ կուլ պիտի տար զինքն և անընակ կղզւոյ մը եզերքն պիտի նետէր իւր անճանաչ նեխեալ դիակն։ Գլուխ պտոյտ մը ունեցաւ և գուցէ այդ վիճակին մէջ կորսուէր. երբ գեղանի գուարթնոյ մը ուրուականը ներկայացաւ իւր երեւակայութեանը և իւր ձիւնակերտ բազուկներն առ նա կարկառելով, մեղմագին ձայնիւ մրմնջեց.

—Ո՛հ, եկու, եկո՛ւ...

Աստղիկ էր այդ հրեշտակը։

Լեւոն սթափեցաւ կարծես խոր քունէ մը։

—Ո՛հ, ըսաւ ինքնին, մեռնելէ առաջ գոնէ անգամ մը զայն տեսնեմ. անգամ մ'ալ հիանամ վրան, թէեւ անարժան եմ։

Ետ դարձաւ եւ մակոյկով մ'անցաւ յիւսկիւտար, որոյ զառիվերներէն մագլցելով վերջապէս հասաւ այն տնակին առջեւ որ իրեն համար երջանկութեան բոյն մը պիտի լիներ, և ուր այնքան համարձակութեամբ կը մտնէր առաջ։ Բայց հիմա պարագայները փոխուած էին, անիծեալ մ'էր ինքզինքն։ Զը յանդգնեցաւ անցնիլ այդ սեմէն, վախնալով թէ մի գուցէ իւր վրդովեալ կերպարանքն զինքը մատնէր։ Պարտիզին որմին ներքեւ կծկտեցաւ մուրացկի մը նման, անշարժ եւ անորոշ։ Եւ մինչ ամենէն անիրականալի գաղափարներ կը յղանար, ահա հրեշտակային ազուն ձայն մը իւր ականջին կը հասնի։ Ակէնքին սիրտն սաստիկ կը տրոփէր, ոտքի ելաւ դողդոջելով եւ հինաւուրց որմին վրայ ճեղքուածք մը գտաւ որուն յառեց իւր անյագ աչերն։ Աստղիկ էր, որ առաւօտեան սպիտակ զգեստներով, հերարձակ, պտոյտ մը կ'ընէր պարտիզին մէջ, ծաղկանց այց կ'ուտար։ Ա՛յն էր առաւօտեան երգչուհին։ Լեւոն արձանի պէս անշարժ զայն կը դիտէր եւ յիշողութեան մէջ փնտռել կը ջանար թէ արդեօք խօսած էր երբէք այդ հրեշտակին հետ, հպա՞ծ էր նորա ձեռաց։ Իւր խօսեցեալն էր մի՞թէ այն, որ՝ իրեն՝ որ խարերայ մ'էր, ինչ երազ, ի՞նչ պատրանք։

Զայնը հետզհետէ կը նուազէր եւ կը կորսուէր տան մէջ։ Պատկերն անհետացած էր։

Լեւոն ետ դառնալ սկսաւ գինով մարդու մը քայլերով։ Սակայն ճանապարհին յոգնութիւնք տակաւ առ տակաւ իւր մտային կարողութիւններն սթափեցուցին։ Սկսաւ խորհրդածել, որոյ արդիւնքն եղաւ անձնասպանութենէն ապրելու որ

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԷՆԴԻԷՄ ԼՈՆԴՈՆԻ

ՏՍՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. ոսկի 1,000,000

«ՖԻՆԻՔՍ»

Հիմնեալ ի Լոնդոն յամի 1782

«ՖԻՆԻՔՍ», հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետերերք Անգղիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյն է 18,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի ժամուց համար։

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոցս, որք ունիմք լիազօր իշխանութիւն կապագրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած ցնցումներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց Թիւ 11։ և 12, Սանտալէր խան, Ղալաթիա, Աւստրիական թղթատան վերեւ։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄԲՈՒՐԳ եւ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ ֆռանք 8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890 » 6,165,860
Ցարեկան հասոյթ » » » 14,135,925

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՈՒԱՆՔՖՕՐԹՈՒԱՋ

ԾՈՎԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ ֆռանք 6,250,000 Պահեստի դրամ ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և գրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Սոյն նիւթերու վրայ մեծագանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընդ. Ֆիւնս միացած է եւրոպեան 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամ գումարն ու պահեստի դրամն է Աւելի քան 100,000,000 ֆռանք

Լիազօր ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ—Գաբու, Անանիատին խան, 12, 13, 14.

16

Ա. ՄԱՑԷՐ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆԴԵՐՁԵԼԻՆԱՑ

ԱՐԱՆՑ ԿԱՆԱՆՑ ԵՒ ՄԱՆՉ ՈՒ ԱՂՋԻԿ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

Բէրա, Թիւնէլի հրապարակը, Թէքքէի դիմաց եւ ի Պոլիս, կամուրջին գլուխը

Ց'Եւրոպա գտնուած մեր գործարաններուն եղած մեծագնակ յանձնարարութիւնք սկսած են ղրկուիլ, որք են աշնան եւ ձմրան եղանակներուն յատուկ արանց, կանանց և փոքր աղջկանց համար հանդերձեղէնք։ Մեր ապրանքները վայելուչ ձեւի, տոկունութեան և գնոց աժանութեան համար կը մրցին համանման վաճառատանց հետ։ Կանանց յատուկ տեղեր եւս կան։

Մայրք վաճառատունն իւր հաստատման թուականէն ի վեր իւր վաճառած հագուստներուն ընտիր տեսակէն ըլլալուն շնորհիւ Պոլսոյ բոլոր ժողովրդեան գնահատման արժանացած է և այդ գնահատումէն քաջալերեալ աշնան եղանակին համար ատ ման և տոկուն հագուստներ բերել տալով, աշխատած է գերազանցել հանդերձեղինաց միւս վաճառատունները։

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՑԻ

Կ. ԵԱՂԼՈՒԿԵԱՆ ԵՒ Ց. ԴՍԱԳՈՒԼԵՍԱՆ ԸՆԿ.

Պահչէ—Գաբու, ձէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10

Զգեստուն առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գտնուին Զինէ և Ճավայէ ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերընտիր եւ ազնիւ ու անուշաբոյր ամէն ճաշակի յարմար։—Կաղանդի նուէրներու համար թէյով լեցուն ճարոնական, Զինական եւ Հնդկական այլ և այլ մեծութեամբք եւ ձեւերով գեղակերտ եւ նկարազարդ տուփեր։—Ցանախորդաց գոհացում տալու համար բնաւ ջանք չը խնայուիր։—Ցանձնարարութիւնք կը կատարուին փութով և ճշդութեամբ։—Գիները որոշ եւ խիստ չափաւոր։—Զի'ք սակարկութիւն։

ՌՈԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍԻՒԱՆՍ ՔՈՌԲՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի 4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է » 35,000,000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամէն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարմունք ամենայն կանոնաւորութեամբ և մանաւանդ առանց որ եւ իցէ ՁԵՂՁի կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ եւ Ընկ. Պահչէ Գաբու, Մէյտանճըք սոքաք, Ուիլիամ խան։

ԳԱԼՈՒՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պոլիս, Պահչէ—Գաբու, Անանիատին խան, 12, 13, 14.

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ

Մասնաւոր բաղադրութիւն Միլանի Պրանգա եղբարց

Մատակարարք իտալիոյ Արքայական Տան

Ոսկեայ չքադրամ՝ Բարիզի 1889ի Ցիեզերական Արուեստահանդիսին մէջ։

Քան տարուան յաջողութիւն Իտալիա, Ամերիկա, ի Հնդկաստան, Ամերիկը և Եգիպտոս—Հաւատարիմ 1885ի Անգերսայի, 1884ի Թուրինի, 1883ի Նիսի, 1881ի Միլանի, 1888ի Մէլբուրնի և Պրուսելի, 1879ի Սիտնէյի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատէլֆիոյ, 1873ի Վիեննայի մրցանգային ցուցահանդէսներուն մէջը։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ պիդերն է։—Շատ բժիշկներէ կը յանձնարարուի իր զգուշական դարմանական ճանապարհի երկիրներու տեղերու, տարափոխիկ հիւանդութեանց և քոլերայի։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ կը դիւրացնէ մարսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը դրդեւ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը, գլխու պտոյտը, ջղային ցաւն և մեղմամղութիւնը։

Այս ընկերիկը, բոլոր ծանօթ պիդերներէն և ամէնէն դերազանց, կ'առնուի ամեն օր ճաշէն առաջ իւր ախորժաբեր։ Շաքէն յետոյ, ապրուս մարսողական է։ Կարելի է խառնել ջրոյն վերմուռ, գինի, Սէլէի ջրոյ և խաշուեի հետ։

ՖԷՐՆԷԴ-ՊՐԱՆԳԱՆ, ինչպես և նոյն տան վերմուռը, կը դտնուի գլխաւոր անուշարարաց, նպարավաճառաց և գինեվաճառաց քով։

Թուրքիոյ համար կենդրոնատեղին է ՊՈՆՈՄԻ և ՐԷՖԻԱ 2218

EMULSION SCOTT

(ՍԿՕՏԻ ՕՀԼԵՐԸՆ)

ՄՈՐԻՒ ՁԿԱՆ ՅՈՒՏ ԻՒՂ

Ինքնաշնչէ՝ որ շատ Ի՛ տոյժով

Դարաբաշալ ձեռամբ ՍԿՕՏԻ և ՊՕՆԻՆԻ ի Նիւ-Եորք։

Կարմիր չափ ախորժակ է

Մորու ձկան հիւմ իւղի բոլոր յատկութիւններէն զատ, հիպոֆոսֆիտներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճղաձութիւնը

Բժիշկներուն ընդունուած է։ ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարսելի է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄՄԷՐ ԵՒ ՀԻՐԵԱԼ 212

ՊԱԶԱՐ ԱԼՄԱՆ

(388, Բերա Մեծ փողոց, 388)

Ընդարձակած ըլլալով իր հաստատութիւնն նորակառոյց չէնքով մը Տանտրէա Բասաժին մէջ, կը հրաւիրէ իր բազմաթիւ յանախորդներն ու արդէն հասարակութիւնը որ բարեհաճի այցելել նոր վաճառանոցները (մուտքը միչտ Մեծ-փողոցէն)։ Հոն կը գտնուին ամէն տեսակ կահ կարասեաց մեծ մթերք, յոյժ խնամեալ և տոկուն պատրաստութեամբ. գրասեղաններ, մատենադարաններ, դարակներ, աթոռներ, ուտելարաններ և սեղաններ ճաշասրահներու համար, թէյի և խաղի սեղաններ, աստիճանաւոր դարաններ, և ճոխ հաւաքածոյ մը Լիւքսի կարասեաց։ Պազար Ալմանի վաճառանոցները կը պարունակեն ամենէն ընդարձակ մթերքն կաղանդի նուէրներու համար. խաղալիկներ, ծննդեան ծառեր, անուշեղէններ, գաւազաններ, հովանոցներ, հովհարներ, ձեռնոցներ, փղոսկրներ, անուշահոտութիւններ, նեխեսեռներ, գոհարեղէններ, ալպոնիներ, մարգարիտներ, անօթներ, պատի ժամացոյցներ, բազմաստեղեան աշտանակներ, լամպարներ, ըմպելեաց արկղիկներ, պղպատեայ նիւթեր, արոյրէ նիւթեր, հայելիներ, ափսէներ, յամպարէ ծխափողի բերանոցներ, կողոմներ, շաքարեղինաց տուփեր, և շատ մը ուրիշ նիւթեր։

ԵՌԱՑԵԱԼ ԱՆԹԻԲԻՌԻՆ

ԼԸ ԲԷՏՐԻԷԼԻ

ԸՆԴԴԷՄ ԳԼԽԻ ՑԱՒԵՐՈՒ, ԾՈՎԷՔ ԲՈՆՈՒԵԼՈՒ ԳԵՐԱԶԱՆՑ ԴԱՐՄԱՆ ԷՆՖԼՈՒԷՆՑԱՑԻ ԵՒ ՏԱՆԿԻ

Ասիա Դառպոնիքը կը փարատէ դեղին գործածութեան յառաջ բերած խիլիերն և սրտի խառնուքը։

ԼԸ ԲԷՏՐԻԷԼ, ԵՒ ԸՆԿ. ի Բարիզ, եւ դեղատանց մէջ։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄԵԾ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Բերուի քաջայով շինուած ՄԱՌԵԱՆԻ ԳԻՆԻՆ պնդացուցիչ և գրգռիչ դեղերուն ամենէն ազդուն է, գերընտիր վերանորոգիչ մարսողութեան և շնչառութեան դործարանաց, ձգտող ճայնական լարերու։ Քինքինայէն նախամեծար է որուն ջերմացուցիչ յատկութիւնները չունի, անարիւնութեան դէմ գործածուող դեղերու մէջ ամենէն գերազանցն է։ Իւր քաղցր համով ընդունուած է իբր աղանդերի գինի և այսպէս, հաճոյալի ձեւոյ մը ներքեւ, ուժ և առողջութիւն կուտայ։ Կը բժշկէ էրիկմարգոց ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ և ամենէ տկար անձանց կուտայ կորով և աշխոյժ։ ԹՈՄԱՌԵԱՆԻ, քաջայի առաջին ծաւալիչը, Պուլվառ Հոսմն, 41, Բարիզ։ Թուրքիոյ համար ընդհանուր գործակալ, Պ. Ժ. Քանձիւք, բրիտանական դեղարան է Կ. Պոլիս։

ՊՏՈՒՂ ԼՈՒԾԻՉ ԵՒ ՉՈՎԱՑՈՒՑԻՉ

ԽԻՍՏ ԱԽՈՐԺԱՀԱՄ

TAMAR INDIEN GRILLON

ԸՆԴԴԷՄ ՓՈՐՀԱՐԻԹԵԱՆ Արիւներթութեան, գլխացաւի, մսդձի, անախորժութեան, ստամոքսի և աղեաց անհանգստութեան։

ՔԱՐԻԶ, Է. ԿՐԻՑԼՕՆ, 33, Արշիվ փողոց և դեղարանաց մէջ։ 33, rue de Archives

ՊՈՒՆԻ ՊԻՏՈՒԱՆ, ՎԻԵՆՆԱՅԻՆ 1888 ՈՍԿԻ ՄԻՏՈՒԱՆ, ՊԱՐԻԶ 1879ԻՆ

QUINA-LAROCHE

ԴԻՑԵՀԱՄ ԵՒ ԲՄՊԵԼԻ

Գինեալ Լառոշը հասարակ պարարտութիւն մը չէ, այլ լուրջ ուսումնասիրութեանց և աշխատութեանց արդիւնք, որք ամենաբարձր վարձատրութեանց արժանացուցած են անոր հեղինակը։

Մնացուածքներ գինեղինիներու բաղադրութեանց ամրոցող պայմանները, յետոյ յոյժ ախորժահամ իբրեւ մը պատրաստել ասկա Գինեալ—Լառոշի հաստատելով գերազանցութեան գաղափարը, որով դիւրացուցած է պատմքի հիւանդութեանց, անախորժութեան, անարիւնութեան, երկարատեւ ներմի և այլոց բժշկութիւնն։ — Կը գտնուի ի Բարիզ, Թ. 22 և 19 Տրուօ փողոց, և Դեղատանց մէջ։ 2218

Լ'ԷՔՕՆՕՄԻ ԷՆԹԷՌՆԱՍԻՕՆԱԼ

L'ECONOMIE INTERNATIONALE

ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆ, ՑՆՏԵՍՈՒԹԻՒՆ, ՀՈՐՍՏՈՒԹԻՒՆ

Ապահովագրական փոխադարձ ընկերութիւն վասն վերակազմութեան դրամագլխոյ

Հաստատեալ Գաղղիոյ Հանրապետութեան 1868 յունվար 22 հրամանագրոյն համեմատ

ԿԸ ԳՈՐԾԷ ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂՂԻՈՅ ՏԵՐՈՒԹԵԱՆ

Ամէն ոք գիտէ խնայողութեան կարեւորութիւնը, բայց շատ անգամ դժնեալով մեր խնայած և աւելցուցած ստակներն ընդունող յատուկ հաստատութիւններ կը կորսնցնենք դրամագլուխ մը կազմելու առիթն և հապար ու մէկ պատճառներ գտնելով՝ մեր խնայածստակներն յուսմպտա կրմատնենք։

Փոքր գումարներով դրամագլուխ մը կազմէլն ալ դժուարին և գրեթէ անկարելի է, եթէ այսպիսի ընկերութեան մը հետ մասնաւոր կապակցութիւն մի չունենանք։

Ահաւասիկ «Լ'Էքօնօմի Էնթէռնասիօնալ» ընկերութիւնն որուն փոքր դրամարներ, այսինքն ամիսը հինգ, տասը կրն վճարելով, ապագային մեր ձեռքը կ'ունենանք հաստատ դրամագլուխ մը։

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒՆԻՆՔ 265

Աւելի մանրամասն տեղեկութիւն ուզող և բաժանորդագրուիլ փափաքողները կը հրաւիրուին դիմել ի Միրքէֆ. հանրային պարտուց պաշտօնատան դիմացը, Կիւլպէնկեան խան, Թիւ 26 27. ընդհանուր տնօրէն Բ. ՇԷՀԻՐԼԵԱՆԻ կամ ընդհանուր քննիչ ԱՆԻԲՏՈՍ ԱՀԱՐՕՆԵԱՆԻ։

COMP RUSSE DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երթեւեկութիւնք

Բշ. 9.21 Օտեսայի ուղղանգամ, ժամ 2ին յետ միջօրէի։
Դշ. 10.22 Աֆշանդրիոյ ուղղակի ուղղանգամ, ժամ 5ին յետ միջօրէի. Պիրէանի ճամբով
Դշ. 11.23 Սեվաստոպոլի ուղղանգամ, առաւօտեան ժամ 1ին։
Դշ. 11.28 Ուղղանգամ դէպի փոքր Ասիոյ Նաւահանգիստները մինչեւ պաթում, առաւօտեան ժամը 11ին։
Հշ. 4.24 Օտեսայի ուղղանգամ, ժամ 2ին յետ միջօրէի։

Ազդ.—Դեկ. 10|22, երեքշաբթի օրը կ պաշուէն դէպի Ուղղիոյ Նաւահանգիստները մեկնող ուղեւորք Զիւռեմիոյ մէջ պիտի հանդիպին Թրիբոլի, պենղուազի, ատիա, և Բոր-Սայիտ գացող շոգենաւուն։ 10

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՒԲԵԱՆ

Ն. ԲԱՌԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիոյ և Պորտսայիտ դէպ՝ կանոնաւորապէս բանալ

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնելով,

Ա. կարգ 250 ֆրանք
Բ. » 178 »

Ուղղակի և արագ ուղեւորութիւն

Նաւուղղեաց, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմեցէք առ գործակատարն ԹԻՄՈԹԷ ԲԸՂՈՒԼ Մոսկանէ Սիրէթ Ֆրան ւէղ

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒԹ

Ուր ոփոը երկու անգամ կը բանին Լիվերբուլ և Ամբ-Եալէյ դէպ

Անուանք	Թոնաժ	Անուանք	Թոնաժ
Ամերիկա	7718	Գանատիոն	4845
Եգիպտոս	7718	Պոմէնիա	4531
Սէրվիա	7391	Սամարիա	3574
Ուրանիա	7268	Մարատոն	2408
Բաւարիա	5587	Գալլիա	2393
Սէքսոնիա	5517	Սարակոսա	2166
Կալլիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալմիրա	2144
Ամէրիքա	2.13	Թրինիտատ	899
Գէտար	1876	Մոբաքդէ	1855
Շեէրպուրկ	1614		

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակատար Thomas C. Joly

Սալիքսիատիս խան, Թիւ 11

17 Ղալաթիա



ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվերբուլ և Մէնչէսթրիանի դէպ՝ բանալ ընթանալ

Անուանք	Թոնաժ	Անուանք	Թոնաժ
Քանարեան	4200	Պիրէնէ	3000
Ֆերոս	4000	Գասպրիա	3000
Օսմանլի	4000	Նէրեթիս	3000
Սէսոդրէս	3250	Բէրա	3000
Թիպոս	3250	Լոգիա	800
Մակասար	3250	Գրէնա	800
Մարեոթիս	3250	Սէսիլ	700

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ. Ուիթալ խան

ՃԷՕՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.

14 31, Ճէյմս Սթրիթ Լիվերբուլ

Արտօնատէր Ս ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՍԵՆԷԼԻՔ ԼՐԱԳՐՈՑ